

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԷՊԸ

Մ. ԱՐԵՂԵԱՆԻ

Ա.

ՎԷՊԻ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

Վէպի պատմութեանը վէպի բնագիւրներն են. ուստի բընական է, որ ամենից առաջ այդ բնագիւրներն ու իրենց պատմութիւնը տեսնենք:

Մեր նոր վէպի մասին, որքան մեզ յայտնի է, ամենից առաջ յիշատակութիւն անում է Ղ. Ինճիճեան իւր «Նոր Հայաստան» գրքի մէջ¹⁾. Նա Կաղզուան գաւառի մէջ գնելով «Խանտուտի ձոր» և «Խանտուտի բերդ» աւելացնում է. «է բերդ ի համանուն ձորավայրի, զոր այսպէս կոչեցեալ ասին յանուն քեռ թագաւորի ուրուք ի մերոց՝ որ բնակեցաւ աստէն. զորոյ զպատմութիւն նման պատմութեան Տիգրանուհոյ յօդեն»: Դժբաղդաբար Ինճիճեանից աւելի բան չենք իմանում. գոնէ համառօտ բովանդակութիւն բերած լինէր: Բայց այդ չէր կարելի սպասել մի ժամանակ, երբ դեռ ոչ միայն մեզնում, այլ և Ներսիսյան չկար ժողովրդական բանահիւսութեան արժանաւոր գնահատութիւն: Մօտ եօթանասուն տարի պիտի անցնէր Ինճիճեանից, որ նոր ուշադրութեան առնուէր մեր վէպը:

1). Գարեգին Սրուանձտեանը, մեր բանահաւաքների ռահվիրան, առաջին անգամ 1874 թուին Կ. Պոլսում հրատարակում է մեր վէպի մի պատմութեան մի գրքոյկի մէջ, որի վերնագիրն է «Գրոց ու բրոց և Սասունցի Դաւիթ կամ Մհերի դուռ»:

Սրուանձտեանը, ինչպէս յառաջաբանի մէջ յայտնում է, երեք տարի հետամուտ է եղել «վէպը» ձեռք բերելու, բայց ոչ ոք չէ գտել, որ ամբողջապէս գիտենար: Վերջապէս յաջողուել է իրեն

1) Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Մասն առաջին, Ասիա. Հատոր Ա. Վենետիկ 1806 թ. եր. 121.

«Մեզ ղաւտի Առնիստ գեղի երեսփոխան պ. Կրպոյին» պատմել տալի Առնիստ գիւղը, գրում է Սրուանձտեան, թէպէտեւ Մշոյ կը պատկանի, բայց Բաղէօն մօտ է, ուստի և լեզուի մէջ Բաղէշոյ բառեր էլ կան. «ընդհանրապէս Պոյթայ և Զուխուրայ գեղերու հայոց լեզուն այս տիպն ունի»:

Սրուանձտեանն ինքը լաւ զնահատելով արգարական նիւթերը՝ գրում է. «Այս գործիս հրատարակութիւնը հասկացողին համար արժէք կունենայ. բայց կարծիս արհամարհողներ աւելի պիտի լինին և այսանողներ, ոչ միայն այս գրութիւնն կտորը, այլ ամբողջ սոյն գրքոյկը, ընդ որ և իմ անձը: Ասոնք չհասկացողներն են»: Բարեբախտաբար Սրուանձտեանը սխալ էր: Ոչ թէ ճշմարանքով քսան հոգի և եթէ հաւանեցան նրա գործին, այլ նոյն իսկ չհասկացողները հրապուրուեցան նրա ճարտար լեզուից և նրա մէջ բերած պատմութեան անարուեստ գեղեցկութիւնից: Ամեն կողմից հաւանութիւն ու քաջալերութիւն ստացաւ, մինչև անգամ դրամական նպաստ—սակաւագէտ քան մեր մէջ: Սիրողները յափըշտակուեցան այդ գործով, իսկ թերահաւատները, թէպէտ դարմանալով, բայց հաւատացին, որ մեր ազգի մէջ ևս կարող են լինել ժողովրդական վէպեր: Ժողովրդագրական նիւթով զրազուողի և բարբառների ուսումնասիրողի համար պարզ պիտի լինէր այդ հրատարակութեան մեծ արժէքը և պիտի օգտուէին նրանից ¹⁾:

Այս առաջին պատմութեան ճիշտագրութիւնը հետեւեալն է.

Բաղդաստու խալիֆան, որ Հայոց Ս. Կարապետի վրայ կռիւ է գալիս, կին է առնում մի գերի հայ աղջիկ, որից ունենում է երկու որդի՝ Արամելիք և Սանասար: Սրանք շինում են Սասուն: Սանասարն վերադառնում է և հօր տեղն իշխում Բաղդաստու. իսկ Արամելիքը մնում է Սասունում և պսակուելով Կապուտիկոյ թագաւորի աղջկայ հետ՝ ունենում է հինգ որդի՝ Յոան Վէգի, Ժնճղափոքրիկ, Ձէնով Ուփան, Պոր Գուսան և Դաւիթ: Արամելիքը տիրում է և՛ Մարին և Մարայ թագաւորի կնոջից ունենում է մի ապօրինի որդի՝ Մարամելիք, այլ և Պլաթի Իբրահիմ աղայի Շըմշըմ խանում կնոջից մի ապօրինի աղջիկ Տչինի աչքերով: Դաւիթը պսակւում է Կաղզուանու ամիրայի աղջկայ՝ Պանդուդ խանումի հետ, որից ունենում է մի որդի՝ անժառանգ և անմահ Մհեր—

1) Գ. Գաւանեանն այս պատմութեան ուրիշ նիւթերի հետ արտատպում է իւր ժողովածուի մէջ. «Материалы для изученія армянскихъ нарѣчій. Выпускъ II, Мушскій діалектъ» С. П. Б. 1875. Ս. Մանգինեանը նոյն յարմարեցնում է իբրև զատագիրք «Ազգային գիւցազնական աշխարհ», իսկ Գ. Պալթեանը թարգմանում է ուսերէն:

Արամեւիքի կնոջ հետ Կապուտկողից Սասուն է գալիս և այստեղ մնում է նաև Քեռի Թորոս:

2. Մ. Արեղեան, Դաւիթ եւ Մհեր: Ինչքան էլ վէպը գնահատողներ կային, սակայն երկար տարիներ նոր պատմուածքներ չհրատարակուեցան: Կ. Պոլսեցիները և բուն երկրացիները, որոնց մէջ յայտնի էր եղել վէպը, չէին տալիս և մինչև այժմ էլ չտուին վէպի նոր պատմուածք: Իսկ արևելեան հայերի մէջ կարծւում էր թէ անպատճառ պէտք է Մուշ գնալ և տեղում լինել վէպը լսելու համար: Մոռացւում է, որ Մշեցիք և առհասարակ այն կողմերի հայերը շարժական են և բազմաթիւ խմբերով ապրում են նոյն իսկ մեր կողմերում, և թէ նրանցից կարելի է գրի առնել վէպի նոր պատմուածքներ:

1886 թուին Ս. Էջմիածնում իմացանք որ ճեմարանի ծառաներից մի Մոկացի հայ, Գննեկանց գիւղից, գիտէ վէպը: Գրի առնելով հրատարակեցինք 1889 թուին Շուշիում: Երևան եկաւ, որ վէպը տարածուած է ոչ միայն Մշոյ և Բաղիշոյ կողմերը, այլ և Մոկաց:

Սրուանձտեանի և այս նոր պատմուածքի մէջ տարբերութիւնը շատ մեծ էր: Մոկաց բարբառով պատմուածքն աւելի բանաստեղծական էր, ներդաշնակ, մասամբ ոտանաւոր, և միջին կային բաւական թւով հատուածներ, որոնք երգւում են. հարուստ էր և նոր գիւցազնական վիպական գծերով և նկարագիրներով. բայց որ գլխաւորն է՝ Դաւթի մասը, ինչպէս ժամանակի մի գրախօս գրում էր, «այնքան ամփոփ է, որ թողնում է մի վերջացրած և գեղարուեստական կողմից միապաղաղ տալաւորութիւն»¹⁾: Աւելացնենք և այն, որ գլխաւոր հերոսն իւր բարոյական արժէքով աւելի բարձր և ազնիւ է քան Սրուանձտեանի պատմուածքի մէջ:

Այս նոր պատմուածքի ճիւղագրութիւնը շատ պարզ է:

Դաւթի հայրը, որի անունը չկայ, Յռան Վերգոյ և Ձէնով Յովան եղբայրներ են: Դաւթի մայրը մարդու մահից յետոյ գնում է Մարամեւիքին: Ձէնով Յովանի կնոջ անունն է Սաւհա և անորդի է. Յռան Վերգոն ունի մի որդի՝ Պարոն Աստղիկ: Դաւիթը նշանւում է Չմշկիկ Սուլթանի հետ, բայց նրան չի առնում, այլ Խանդութ խաթունին, որից ունենում է մի որդի՝ անժառանգ և անմահ Մհեր: Վերջինիս կինն է Գոհար խաթուն:

3. Գ. Յովսէփեան, Սասմայ ծոեր:—Երկրորդ պատմուածքի հրատարակութեամբ վէպի հետաքրքրութիւնը կենդանացաւ. գրուեցան գրախօսականներ և քննադատութիւններ մեր և ռուսաց

1) «Մուրճ» ամսագիր. 1889 № 9. եր. 1462:

թերթերում¹⁾, 1890 թուի ամառը Ս. էջմիածին հանդիպելով խնդրեցինք մեր աշակերտ և բարեկամ նորընծայ Գարեգին սարկաւազին (այժմ վարդապետ), որ հետաքրքրւում էր ժողովրդագրական նիւթերով, առանձնապէս ուշադրութիւն դարձնել վէպի նոր պատմուածքների գտնելու մոկացի և մշցի պանդուխտների մէջ։ Սարկաւազը մեծ եռանդով աշխատեց և կարճ ժամանակում ոչ միայն մոկացիներից, այլ և արարանցիներից գրի առաւ շատ ազգագրական նիւթեր, ի թիւս որոց և ժողովրդական վէպի մի քանի պատմուածքներ, որոնց մի մասը «Սասմայ ծոեր» վերնագրի տակ տպագրուեցաւ Թիֆլիսում 1892 թ. Հրատարակչական ընկերութեան հաշուով։

Երևեցաւ ուրեմն, որ վէպը տարածուած է և Ռուսիոյ հայերի մէջ, յատկապէս Աբաղանցոց, որոնք Մշոյ և Բուլանքի կողմերից են գաղթած։ Ժողովրդի հետ գաղթել է և վէպը, որ բարբախտաբար այս նոր հայրենիքում մոռացութեան չի տրուել, այլ նոյն իսկ մասամբ կապուել է նոր տեղագրութեան հետ։

«Սասմայ ծոերի» մէջ տպուած պատմուածքները չորս են։

ա. Համրլուի պատմութիւնը, որ գրած է Աբարանի Զամրու գիւղում և որի ճիւղագրութիւնը հետևեալն է.

Սենեքերիմ Թագաւորը (հաւանորէն) քրիստոնեայ կնոջից ունի երկու որդի՝ Սանասար և Ասլիմիլը։ Վերջինս նստում է հօր գահի վրայ։ Սանասարը պսակւում է մի հայ աղջկայ հետ, որ բերում է Խլաթայ Մելքոն Թագաւորը, և ունենում է Առիծաձև Մհերին։ Այս Մհերը Ասլիմիլի քաղաքում մի որբ և այրի կընողից ունենում է մի ապօրինի որդի՝ Մարամիլը. բայց յետոյ պսակուելով Մանձկերտու բերդի տէր Թևաթորոսի աղջկայ հետ՝ սրանից ունենում է երեք որդի. Յոան Վէգոյ, Փոքրիկ Ծնդղիկ և Դաւիթ։ Դաւիթն էլ աւնում է Կապուակողցի Պանդուխտանում, որից ունենում է անժառանգ և անմահ Մհերին։

Միւս կողմից Բեռի Թորոսիկը, որ Թևաթորոսի տանից իբրև հարսնադպէր գնում է Առիծաձև Մհերի կնոջ հետ և մնում Բասունում, ունենում է երկու որդի՝ Պոր Մանուկ և Ձէնով Յովան։

Աբարանում Գ. Յովսէփեանը գրած է և երկու ուրիշ պատմուածք Ափնայ և Դադաօֆար գիւղերում, որ դժբախտաբար տպագրուած չեն, այլ միայն Զամրուի պատմուածքի տակ իբրև ծանօթութիւն հատուածներ կան մէջ բերուած։ Այս ծանօթութիւններից երկուսն է, որ Ա. (Ափնայ) պատմուածքով Սանասարը

1) Յիշենք միայն Լէօի «Դաւիթ և Մհեր», և մեր յօդուածը «Ազգային վէպ», «Մուրճի» 1889 և 1890 թուերին։

ժառանգում է հօր գահը և Առիւծաձև Մհերը Ասլիմեւլիքի որդին է և ոչ թէ Սանասարի: Դարձեալ Ձէնով Յովանը առիւծաձև Մհերի երրորդ որդին է: Իսկ Բ. (Ղազանֆարի) պատմուածքով Ձէնով Յովանը Դաւթի քեռին և Խլաթայ տէրն է:

բ. Մոկաց մի պատմուածք, միայն «Սանասարի և Բաղդասարի ծնունդը»: Ճիւղագրութիւնն է.

Կռապաշտ թագաւորն առնում է խաչապաշտ թագաւորի աղջիկը, որ ծովից յղանալով ունենում է երկու որդի՝ Սանասար և Բաղդասար: Սրանք պսակւում են եօթ-ճիւղ քոյրերի հետ:

գ. Մոկաց մի պատմուածք, «Բաղդասար»: Սասունում բընակում են Սանասար և Բաղդասար: Բաղդասարն առնում է Պղնձէ քաղաքի թագաւորի աղջիկը, իսկ Սանասարը մի ուրիշ թագաւորի աղջիկ:—Շարունակութիւնը Դաւիթ և Մհերի մասին չի տպագրել բանահաւաքը:

դ. Մոկաց մի պատմուածք, մոկացի Յովանի ասած: Սկըսւում է Դաւթից: Սասունում ապրում է Մհեր, որ Մսրայ Իսմիլ խանութից ունենում է մի ապօրինի որդի՝ Մսրամեւլիք. իսկ իւր կնոջից՝ Դաւիթ, որի անունը դնում են «Պապկի անուան վրայ» (եր. 83): Մհերի եղբայրները ուրեմն Դաւթի հօրեղբայրներն են՝ Ձէնով Օվան և Յուան Վեդոյ: Դաւիթն առնում է Իրանայ քաղաքի տիրոջ աղջկան՝ Խանդուլթ խաթունին, որից ունենում է անժառանգ և անմահ Մհերին: Այս Մհերի կինն է Գոհար խաթուն, որ պատմուածքի մէջ մէկ զադրբեշանցի է դուրս գալիս, մէկ գիւրջիստանցի կամ գիւրջու աղջիկ:

Բացի այս մոկաց պատմուածքներից Գ. Յովսէփեանը գրած ունի և ուրիշ երկու մոկաց պատմուածքներ, որոնցից հատուածներ միայն բերած է իբրև ծանօթութիւն: Սրանցից Ա. պատմուածքով Դաւիթը Սանասարի որդին է և ոչ Մհերի: Այս երկու ձեռագիր պատմուածքները, ինչպէս և վերևում յիշուած Ամինայ և Ղազանֆարի, տարիներ առաջ կարդացել ենք և երբեմն օգտուում ենք դրանցից մեր յօդուածի մէջ ¹⁾:

4. Եւստիկ վարդապետ, Տղայ Դաւթի և աղջիկ Խանդուլթի հեքեաթը:—Այս պատմուածքը, որ տպագրուած է «Արարատ» ամսագրի մէջ 1895 թ ՅՅ 11 և 12, գրի է առնուած Պարսկահայքում, Ս. Թադէոս առաքեալի վանքում: Ասողն եղել է ուստայ Դաւիթ, որ սովորել է իւր հօրից, իսկ հայրը իւր հայր վանցի

1) Ցաւալի է, որ Գ. Յովսէփեանն այսքան տարիների ընթացքում այս ձեռագիրները ոչ մի տեղ տպագրութեան չէ յանձնել: Այդ ձեռագիր Մոկաց պատմուածքներից մէկը, որքան յիշում ենք, առջնակարգ պատմուածք կարող է համարուել:

Օվանէսից: Կը նշանակէ պատմութեամբ Վանից է փոխադրուած Պարսկահայք: Բայց և այնպէս՝ մեր ժողովրդական վէպը Պարսկահայքում հաստատուած է, և երևի ի հնուց, որովհետև գործողութեան տեղերը, յատկապէս Խանդուկ խանութի մասում, գտնուում են բոլորը Պարսկահայքում, ինչպէս են՝ Քիլիսէ, Խանդուկի բերդ, Փերա գիւղ և այլն: Վէպն ուրեմն այստեղ բնիկ է և հաւանօրէն տարածուած պիտի լինի:

Այս պատմութեայ ճիւղագրութիւնը հետևեալն է.

Մտայ Մհեր թագաւորը երկու կին ունի. պատիկ կինը մի «մարդուց» ունենում է մի որդի, որի անունը Մհերը դնում է Շուն Մելիք, որովհետև գիտէր, որ իրենից չէ: Մեծ կինը Սասունցի է, Սասունայ տէրերի՝ Ձէնով Յովանի, Թևաթորոսի և Յոան Վեդիէի, քոյրը: Այս կնոջից Մհերը ունենում է Դաւիթն, որ առնում է Բիլիսեցի Խանդուկ խանութին:

5. Սասունցի Դաւիթ, Խաթայ բարբառով, տպուած «Արարատ» ամսագրում 1898. եր. 520 հտն.: Յայտնած չէ թէ ում գրի առածն է, բայց գիտենք, որ Ս. Հայկունուն է: Ծիւղագրութիւնն է.

Հնդայ Մելիքը, որի կինը Ձէնով Օվանի և Ձէնով Սարգսի քոյրն է, ունենում է երկու որդի՝ Ապտըլ-Քերիմ և Սինամ-Քերիմ: Վերջինս կարգւում է Սասունում և ունենում երկու որդի՝ Յոտ Վեդոյ և Դաւիթ: Սրա կինն է կապուտկողցի Խանդուկ խանութ, իսկ որդին Դաւիթ (փոխանակ Մհերի):

1898 թուին ստանձնած լինելով Ս. Էջմիածնի ճեմարանում Հայոց գրականութեան դասեր, ուսման նիւթ դարձրինք ի միջի այլոց և մեր վէպը, որով և ընդհանուր հետաքրքրութիւն առաջացաւ ժողովրդական բանահիւսութեան համար, և գրի առնուեցան բացի այս պատմութեայց, այլ և մի քանի ուրիշ պատմութեաներ մեր պաշտօնակից Բ. Խալաթեանի և մեր աշակերտ Ա. Արեղեանի ձեռքով: Այդ պատմութեաներն են.

6. Բ. Խալաթեան. Սասնայ փահլեաններ կամ Թլօր Դաւիթ և Մհեր, Էջմիածին, 1899: Պատմողն է մոկացի Ջատիկ, նոյն Գինեկանց գիւղից, որից է և 2-րդ պատմութեայ ասողը՝ Նախոն: Ջատիկը համարում է վարպետ, «ասացող», որովհետև շատ հեքիասներ և երգեր գիտէ և սիրով պատմում է ամենքին: Նրանից է մասամբ սովորել և Նախոն, որը սակայն աւելի ճարտար պատմող է քան Ջատիկը: Սրա պատմութեայ մէջ կան մասեր, որ Նախոյի պատմածի մէջ չկան և ընդհակառակն Նախոյի պատմածի մէջ կան կտորներ, որ ուրիշ պատմութեաների մէջ ևս կան,

բայց Ձատիկի պատմածի մէջ չկան. որից պարզ երևում է, որ Նախոն միայն Ձատիկից չէ սովորել:

Այս պատմութեան ճիշդագործութիւնն է Մհերը, որի հօրեղբայրներն են Ձէնով Յովան և Յուան Վերգոյ, Մսրամելիքի կնոջից ունենում է մի ապօրինի որդի Մսրամելիք, իսկ իւր կնոջից Դաւթին: Սա նշանւում է Չմկիկ սուլթանի հետ, բայց առնում է խանդութ խաթունին, որից ունենում է մի որդի՝ անժառանգ և անմահ Մհեր: Սա էլ առնում է Գոհար խաթունին:

Պատմութեան մէջ յիշում է և Պարոն Աստղիկ (եր. 64) իբրև Ձէնով Յովանի (կնոջ անունն է Սառիա) որդի. բայց երես 58 Ձէնով Յովանն անգաւակ է, որից պարզ երևում է, որ պատմողը շփոթուել է և հակասութեան մէջ ընկնելով, Պարոն Աստղիկին, որ 2-րդ պատմութեան վերգոյի որդին է, դարձրել է Ձէնով Յովանի որդի:

Բ. Խալաթեան, ինչպէս յառաջաբանի մէջ յայտնում է, գրած ունի և «մի քանի նոր վարիանտներ» և, բայց դժբաղդաբար, որքան գիտենք, դեռ չեն տպագրուած:

Դ. Արտաշէս Արեղեան, Թլատ Դաւիթ: Այս վերնագրի տակ տպուած են երկու պատմութեան, որոնք գրի առնուեցան 1899 թուին էջմիածնում և նախ տպագրուեցան «Ազգագրական Հանդէսի» 2. և 3. գրքերում և այդտեղից արտատպուեցան առանձին գրքոյկով Թիֆլիս 1902 թուին:

ա. Մոկաց պատմութեան, որի ճիշդագործութիւնն է.

Մեծ Մհերը Մսրամելիքի կնոջից ունենում է մի ապօրինի որդի՝ Մելիք կամ Մսրամելիք, իւր կնոջից՝ Դաւթին: Սա պատկերւում է Խոյայ քաղաքի խանդութ խաթունի հետ, որից ունենում է Պատիկ Մհերին: Դաւթի հօրեղբայրն է Ձէնով Յովան, որի կնոջ անունն է Շիրին Անախուն Գիւհար. իսկ խանդութի եղբայրն է Քեռի Թորոս:

բ. Արարատեան պատմութեան, Սասնայ ծռեր, որ ասել է էջմիածնի գաւառի Դովրի գիւղացի Մկրտիչ, որ սովորել է իւր համագիւղացի ծերունիներից, «որոնք գաղթած են եղել Տաճկաստանից (Ղըզըլ դայա). ուրեմն և պէտք է ընդունել՝ հայ ժողովրդական վէպը տաճկահայերից է անցել ռուսահայերին: Պէտք էր սպասել, որ վերոյիշեալ Մկրտիչը պատմէր ոչ թէ Արարատեան բարբառով, այլ իւր բուն հայրենիքի՝ Ղըզըլ դայայի բարբառով. բայց նա, ինչպէս և նրա համագիւղացիները, թողել են իրենց բուն բարբառը և խօսում են Արարատեան բարբառով՝ շրջակայքի բնակիչների լեզուի ազդեցութեան տակ ընկնելով»:

Ժողովրդի «Արարատեան բարբառ» կոչածը արևելեան բար-

բառի մի տեղական խօսուածք է, որ սակայն դեռ մէջը, թէպէտ սակաւաթիւ, արեւմտեան ձևեր ունի: Եթէ ի նկատի ունենանք թէ որքան երկար ժամանակ գաղթական հայերը պահում են իրենց հին բարբառը, պէտք է կարծել, որ Դովրեցիք դարեր առաջ պիտի էջմիածնի գաւառը գաղթած լինեն, որ արդէն փոխել են իրենց լեզուն: Պատմութիւնից յայտնի է, որ 17-րդ դարում, Շահ-Աբասի աւերմունքից յետոյ, արեւմտեան հայերից ամբողջ գիւղեր գաղթել են և էջմիածնի գաւառում ու շրջակայքում բնակուել:

Այս պատմութեամբ ցոյց է տալիս, որ մեր վէպը վաղուց հաստատուած է Այրարատեան աշխարհում և այստեղ առանձնացած ապրելով առանձին փոփոխութիւններ է կրել, որով և շատ տարբերում է միւս պատմութեաներից: Չնայելով սրան՝ վէպը պահել է ճիշտ աշխարհագրութիւն և պատմական յիշատակութիւններ: Ծիւղագրութիւնը հետեւեալն է.

Մի կռապաշտ թագաւոր իւր քրիստոնեայ կնոջից, որ Քեռի Թորոսի քոյրն է, ունի երկու որդի՝ Սանասար և Բաղդասար: Շինում են Սասուն և երկուսն էլ այստեղ պսակւում: Սանասարն ունենում է երկու որդի՝ Իշխան և Արլաղ, որոնք նոյն Սանասարի և Բաղդասարի կրկնուածքն են: Արլաղն առնում է Բաղդասարի խալիֆայի նշանածին, որից, իւր մահից յետոյ, ծնւում է Դառնիկ Որբիկ: Սա իւր ազգից մի աղջիկ է առնում և ունենում Դաւթին: Դաւթին առնում է Ղլաթից Խանդութ խաթունին, որից լինում է մեծ Մհերը: Սրանից լինում է Թլօր Դաւիթ, իսկ Դաւթից Պատի Մհերը: Այս վերջին երեքի մասին, սակայն, բան չկայ պատմութեամբ, որովհետեւ Դառնիկ Որբիկ, Դաւիթ, Թլօր Դաւիթ՝ միեւնոյն Դաւթի կրկնութեամբ են:

Մեր ժողովրդական բանահիւսութեան անխոնջ և բեղմնաւոր ժողովող Ս. Հայկունին ընկուելով էջմիածնում և առանձին յարմարութիւն ունենալով գիւղացիների հետ շփուելու, վերջին տարիներն յատուկ ուշադրութեամբ սկսեց հետեւ մեր վէպին և գրի առաւ մի քանի պատմութեաներ, որոնք տպագրուած են էջմիածնում «Էմինեան Ազգագրական Ժողովածուի» Բ. և Գ. հատորներին մէջ 1901 և 1902 թուերին: Այդ պատմութեաներն են.

8. Ս. Հայկունու, էմին. Ազգ. Ժող. բ. գիրք, որի մէջ կան.

ա. Մոկաց մի պատմութեամբ, Սանասար և Բաղդասար. առել է Մոկացի Սաքոն, որ 21 տարի ապրել է Արճիշու Կարածքար գիւղում: Սովորել է իւր պապ Պօղոսից, զոր լաւ երգիչ էր... Դաւթի հօթ ճիւղն էլ խիստ մեծ յաջողութեամբ կասէր, որ և Արեւեում է ապրել և մեռել: Ծիւղագրութիւնը հետեւեալն է.

Միւրնաքերիմ թագաւորն առնում է խաչապաշտ թագաւորի աղջկան, որ ծովեզրի աղբիւրից յղանալով բերում է Սանասար և Բաղդասար եղբայրներին: Սանասարն առնում է Ձընմաչնայ թագաւորի աղջիկ Կրխասչուին (քառասուն-ճեօղ ծամ), իսկ Բաղդասարը սրա քրոջը: Սանասարին լինում է մի որդի՝ Մհեր, իսկ Բաղդասարն անորդի է մնում:

բ. Մոկաց մի պատմութեամբ, Դաւիթ և Մհեր, պատմած Մոկացի վարդանի: Ծիւղազրութիւնն է.

Մհերը Մսրամելիքի կնոջից ունենում է մի ապօրինի որդի՝ Մելիք (Մսրամելիք), իսկ իւր կին Քառասուն-ճեօղ-ծամից՝ Դաւթին: Մհերի եղբայրն է Ձէնով Յովան: Դաւիթն առնում է Թաւրիզեցի Խանդութ խաթունին, որից ունենում է մի որդի անժառանգ Մհեր:

9. Ս. Հայկունու, էմին. Ազգ. Ժող. դ. գիրք, որի մէջ կան.

ա. Մի պատմութեամբ Շատախի բարբառով, պատմած Մըկրտիչ Յարութիւնեանի: Ծիւղազրութիւնն է.

Մհեր և Ձէնով Յովան եղբայր են: Մհերը Մսրամելիքի կնոջից ունենում է մի ապօրինի որդի՝ Մսրամելիք, իսկ իւր կնոջից Դաւթին: Սա առնում է Օղան-Տօղանի թագաւորի աղջիկը՝ Խանդութ խանումին, որից լինում է Մհեր:

բ. Մի պատմութեամբ «Արարատեան ճիւղ»: Ասել է վաղարշապատի մօտիկ Մուղանճղ գիւղի բնակիչ Մուրատը, որ սովորած է մոկացի Բարսամ աշուղից. վերջինս էլ իւր հայր կոյր Սանասէրից: Այս պատմութեամբը ժողովոյն «արարատեան ճիւղ» է անուանում, որովհետեւ պատմողն այրարատցի է: Լեզուն իսկապէս արևելեան այն բարբառներից է, որոնք իրենց մէջ դեռ շատ ունեն արևմտեան ձևեր և դեռ չեն ենթարկուած արևելեան շեշտին: Այս պատմութեամբն ևս ցոյց է տալիս, որ վէպն արևելեան բարբառի մէջ է մտած և էջմիածնի գաւառում հաստատուած և դարձեալ առանձին փոփոխութեան ենթարկուած, ինչպէս 7-րդ, բ. պատմութեամբը: Ծիւղազրութիւնն է.

Մի կուսապաշտ թագաւոր առնում է խաչապաշտ Ղումրիկ թագաւորի աղջկանը, որ ծովից յղանալով բերում է Սաղնասարին ու Բաղդասարին: Բաղդասարն առնում է Պղնձէ քաղաքի թագաւորի աղջիկ Քառասուն-ճեօղ-ծամին, իսկ Սաղնասարը Դեղձուն խաթունին: Բաղդասարից լինում է Ձոջ Մհեր, իսկ Սանասարից Յոան Վիրգոյ, Ձէնով Յովան: Սկզբի ողորմի մէջ սակայն հակառակն է դրած, այսինքն Մհերը Սաղնասարի և Քառասուն-ճեօղ-ծամի որդին է, իսկ Յոան Վեգոն ու Ձէնով Յովանը Բաղդասարի և Դեղձուն խաթունի: Ձէնով Յովանի կինն է Գոհար խաթուն:

Մհերը Մարամելիքի կնոջից ունենում է մի տղային՝ որդի՝ Մրս-
րամելիք, իսկ իւր կնոջից Դաւթին։ Սա առնում է Կապուտիոզ
քաղաքից Խանդուկ խաթունին, որից լինում է անժառանգ Մհերը։

Ժողովրդական վէպի տպագրուած պատմութեաները սրտնք
են, որ մեզ յայտնի են։ Մի քանի ձեռագիր պատմութեաների
մասին յիշեցինք վերը։ Մեզ մօտ կան և երկու ձեռագիր, որ սա-
կայն առանձին արժէք չունին։ Դրանցից առաջինը գրել ենք
Բաշ-Աբարանում, յիշենք միայն, որ Սանասարի և Բաղդասարի
մայրն այստեղ Մովսէլ խանում է կոչւում։ Իսկ միւս պատմութեան-
քը գրել է մեր աշակերտ Մելիտոն Գարուբիւնեանը Թիֆլիսում՝
դաղթական հայերից *):

Ամփոփելով վերևում գրածը՝ տեսնում ենք 1874—1889 թու-
ականը տասնութինգ տարուայ ընթացքում մեր վէպի նոր պատ-
մութեաներ գրի չեն առնուել։ իսկ յաջորդ տասներկու տարուայ
մէջ, չհաշուած ձեռագիրները (թուով առնուազն 8), գրուած և հրա-
տարակուած են 14 պատմութեան, ընդամենն ուրեմն 15 պատմութեան,
որոնց մի մասը սակայն թերի են, այսինքն չունեն վէպն սկզբից
մինչև վերջը։

Նոր պատմութեաների անհրաժեշտութիւնը—իսկապէս էլ
վերջին տարիների ընթացքում համեմատաբար մեծ գործ է կատար-
ուած մեր վէպի համար, բայց և այնպէս՝ վերևի համառօտ տեսու-
թիւնն արդէն ցոյց է տալիս, որ վէպի գրի առնուելն ու տպա-
գրուելը մեծ մասամբ պատահական է եղել, և այն էլ, Սրուանձտեա-
նից յետոյ, բոլոր պատմութեաները ¹⁾ պարտական են իջմիածնում
ապրողներին։ Ասել չի ուզի, որ իջմիածինն իրեն կրօնական կենդ-
րոն՝ շատ կողմերից հայեր քաշում է դէպի ինքը, ուստի և իջմի-
ածնում աւելի յարմարութիւն կայ վէպի պատմութեան լսելու դա-
նազան տեղերի հայերի բերանից, բայց կարծում ենք՝ վէպի գրի
առնուելուն պիտի գործակցէին ամեն կողմերի հայերը։ Վէպը պէտք

*) Այս յօդուածը բոլորովին պատրաստ էր տպագրութեան
համար, որ Ե. Լալայեան մեզ յանձնեց ծանօթանալու իւր նոր
գրի առած մի պատմութեան, որ պիտի տպագրուի Վեպագրական
Հանդիսի մէջ։ Այս պատմութեան ասել է նոր-Բայազէտի Ղշաղ
գիւղացի Առաքել։ Վէպն սկսում է Հայոց Պապ Թադևոսով, որ
նստում է Կապուտ-կողում, և որի աղջիկ Փիրզատ խանութին
առնում է Մարայ կռապաշտ Թադևոսը։ Աղջիկը ջրից յղանալով
բերում է Մհերին, որի որդիքն են Աբամելիք և Սանասար։ Աբա-
մելիքի որդիներն են Դաւիթ, որ Խանդուկից ունենում է Մհերին։

¹⁾ Ի բաց առեալ ի հարկէ վերևի ծանօթութեան մէջ յիշուած
պատմութեան, որ ձեռագիր է։

է գրել հէնց իրեն տեղում. մինչդեռ էջմիածնի մարդիկը մեծ մասամբ էջմիածնում նստած են գրել՝ լսելով պանդուխտներից. իսկ պանդխտութիւնը, ինչքան էլ կարճատև լինի, շատ զօրեղ ազդեցութիւն է անում պանդխտողի հոգեկան վիճակի, հետևաբար և վէպի վրայ:

Մեր տեղը ուրիշ ազգեր լինէին, վէպի գրի առնելը չէին թողնիլ պատահական հետաքրքրուողներին, որոնք մի կամ երկու պատմուածք գրելուց յետոյ, անշուշտ անձնական հանգամանքների պատճառով, այլ ևս հետամուտ չեն եղել նոր պատմուածքներ գտնելու, այլ առանձին կազմակերպուած խմբերի ձեռով, ինչպէս ամենայն ժողովրդական արդիւնք, նոյնպէս և վէպը տեղն ու տեղը ամենայն ճշտութեամբ գրած կը լինէին և բազմաթիւ պատմուածքներ առանձին հատորների մէջ միասին հրատարակած, և մենք այժմ կունենանայինք մի ամբողջական ժողովածու և կիմանայինք թէ որտեղ ինչ կայ և ինչպէս է պատմւում¹): Մինչդեռ հիմա շատ քիչ տպագրւում ևս պատմուածքներ ունենք. մեր վէպի մասին ճիշտ ու որոշ ծանօթութիւն չունենք, չգիտենք ամբողջութիւնը: Կան հերոսներ, որ անուանով են միայն յիշուում, այն ինչ թւում է թէ դրանք իրենց «ճիւղը» պէտք է ունենան:

Նիւթի այս սակաւութեան պատճառով վէպի կատարեալ ուսումնասիրութիւնն անել այժմ դեռ կարելի չէ: Եւ եթէ հիմա նորից ձեռնարկում ենք այդ, միայն նրա համար, որ կարծում ենք ժամանակ է այս խնդիրն անուշադիր չթողնել: Ծիշտ է, առայժմ դեռ անհրաժեշտ են մեզ նոր պատմուածքներ ժողովել և հրատարակել. բայց դրա համար հարկաւոր է հետաքրքրութիւն, որ կըլինի միայն այն ժամանակ, երբ մեր ժողովրդական վէպի արժէքը կը գիտցուի: Խօսքով ամենքս ենք հարկաւ գնահատում ամեն մի ազգագրական նիւթ. բայց ցաւ է, մեզնից իւրաքանչիւրը որ կարող է՝ ժամանակից խնայում է որևէ նիւթ ժողովելու: Եթէ հասկացողներն այսպէս են վարւում, որչափ ևս առաւել նրանք, որ, օրինակ, ժողովրդական վէպի մասին որոշ գաղափար չունեն, բայց իրենց յարմարութիւններով կարող էին մեծ յաջողութեամբ գրի առնել շատ բան: Մի քանի տարի առաջ պ. Հայկունին անգամ, որ արդէն մեծ տեղ է բռնում մեր բանահաւաքների մէջ, հարցնում էր թէ ինչ պէտք է գրել և ինչպէս գրել. արդեօք ամեն բան էլ պէտք է գրել. և մեր ժողովրդական վէպի համար յատկապէս կասկածում էր թէ արդեօք այն պատմուածքներն էլ գրել, որոնք նման են ար-

1) Ուրախութեամբ լսեցինք պ. Ե. Լալայեանից, որ «Ազգագր. Հանդէսի» մէջ բանալու է մի առանձին բաժին մեր ժողովրդական վէպի կարծում ենք, ժամանակ է արդէն այդ բանն անելու:

դէն տպագրուածներին: Եթէ պ. Հայկունու նման մէկը այսպիսի հարց էր տալիս, ռեքան մուծ գաղափար պիտի ունենան ուրեմն ուրիշներն այս խնդրի համար:

Ժողովրդական պատմութեան, առանձնապէս վէպի վերաբերեալ ոչ մի բան անուշադիր չպիտի թողնել: Ինչքան էլ նման պատմութեան ներ տպուած լինին, նոր պատմութեան միշտ մի որևէ նորութիւն, կեանքի մի գիծ, սովորութիւն կամ հաւատալիք, ժողովրդական մի նոր աշխարհայեցողութիւն և այլն մէջ կը բերէ: Ել չենք ասում թէ նոր պատմութեան մէջ կարող են այս կամ այն դիպուածը փոքրը ինչ ուրիշ տեսակ պատմութեան լինել՝ որով մի պատմական յիշողութիւն կամ առասպել աւելի կարող են պարզուել: Որքան էլ աղճատութեան և աննշան երևան և նոյն իսկ անիմաստ թուին վէպի պատմութեանը,—ինչպէս և ամեն ժողովրդական բանահիւսութեան արդիւնք,—դարձեալ ունեն իրենց արժէքը: Մի բառ, մի խօսք, մի յատուկ անուն լոկ կարող է երբեմն բանալ ուսումնասիրողի առաջ մի ամբողջ պատմական դիպուած, մի հնացած պատմական երևոյթ և աւելի ևս հասկանալի դարձնել վէպը: Կատարեալ ուսումնասիրութեան համար ոչ մի պատմութեան անուշադիր չպիտի թողնել, ուստի և անհատեշտ է, որ շատ տեղերի և բազմաթիւ պատմութեանը ունենանք:

Աւելորդ չի լինիլ գուցէ, որ այստեղ յիշեցնենք, որ գրի առնողն իրենից ոչ մի փոփոխութիւն չպէտք է մտցնէ մէջը և որքան կարելի է, վէպը հարադատութեամբ տայ, ինչպէս լսում է: Այնուհետև պէտք է մանրամասն տեղեկութիւն տալ թէ երբ, որտեղ, ումնից է գրի առնուած: Պատմողը որտեղացի է, որտեղ է ապրել, ինչպիսի մարդ է: Պէտք է յիշել պատմողի տարիքը, բնակութիւնը, հակումները, ճաշակը, սովորութիւնները, պարապմունքը. մի խօսքով, նրա համառօտ կեանքը, և թէ նա որքան լաւ է իմացել վէպը, երգել է, անգիր ասել և այլն. և թէ վէպի հերոսների մասին ինչ կարծիք ունի, ինչ ծանօթութիւն ունի վէպի մէջ յիշուած աշխարհագրական տեղերի մասին: Պէտք է հարցնել թէ որտեղ կան տեղեր, որոնք կապուած են վէպի այս կամ այն հերոսի անուան, կամ որևէ դիպուածի հետ. և վերջապէս թէ պատմողն ումնից է սովորել և երբ. նրա վարպետը որտեղացի է եղել, որտեղ է ապրել, ինչպիսի մարդ է եղել,—ուրիշ խօսքով՝ որքան հնար է պատմողի վարպետների ազգաբանութիւնն անել:

Այս ամենն անհրաժեշտ է վէպի տարածման ճանապարհներն իմանալու համար և ապա այն պատճառով, որ ամեն պատմող ևս, ինչքան էլ աշխատի փոփոխութիւններ չմտցնել, դարձեալ իւր ճաշակի, պարապմունքի և այլն համեմատ իւր միջավայրի



դրոշմը կը դնի վէպի վրայ և իւր ժամանակի ու շրջանի ոգին կը տայ նրան: Թէպէտև կամաց կամաց և անզգալի կերպով, բայց ամենայն պատմող, որ մի բան աւելացնում կամ պակասեցնում է, ժամանակի ընթացքում արդէն փոփոխութիւնը մեծ է լինում: Եւ վէպի ներքինը, նրա կենցաղական ու բարոյական կողմերն իսկապէս այսպիսի անձնական ազդեցութիւնների տակ է փոփոխութիւն կրում: (Միւս կողմից աշխարհագրական անունները ևս փոխւում են պատմողների բերանին, անծանօթ օտար անունները մոռացւում են և վէպը առանց անունների պատմում, կամ թէ պատմողը հին անունների տեղ մտցնում է իրեն ծանօթ նոր անուններ. օրինակ՝ մշեցին աւելի Մշոյ կողմերի անուններ է մէջ բերում, մինչ պարսկահայը Խոյի և Մակուայ կողմերի: Վերցնենք մի օրինակ միայն: 8—րդ. դ. պատմութեան մէջ, եր. 436, Դաւթի և Մսրայմելքի կռուի նկարագրի մէջ ասուած է. «Դաւթի ձինը խրեղէն էր. ըստից վերուց դրեց Ալիբէկլու»: Եթէ մենք չիմանայինք այդ պատմողի յատկութիւնը և թէ նա որտեղ է պատմում, կըկարծէինք թէ Ալիբէկլու գիւղը, որ Վաղարշապատի մօտ է, մտնում է վէպի մէջ իբրև գործողութեան տեղ. մինչդեռ այդ անունը հաւաստեալ ոճի կենդանութեան համար է ասուած, ճիշտ ինչպէս նոյն կռուի նկարագրի մէջ մի քիչ առաջ, եր. 436, ասուած է թէ Մսրայ մելիքը Դաւթին զարկում «բերըմ խասցնըմ էր չուր էջմիածին», և ապա ետևից աւելացնում է պատմողը, «Խօսքի խասկանալու խամար». այսինքն թէ մինչև էջմիածին չէր հասցնում, այլ պատմողն իրենից է աւելացնում խօսքը բացայայտ անելու համար:

Այսպիսի նմանութեամբ ասուած անուններն անշուշտ շատ անգամ լսողների կողմից իրական են ընդունում, և ահա Ալիբէկլու և ուրիշ տեղեր դառնում են վէպի գործողութեան վայրեր և վէպը կապւում է մի նոր տեղի հետ: Ասել չի ուզել, որ ուսումնասիրողն այդպիսի նորամուտ բաները պիտի աշխատի որոշել, իսկ դրա համար հարկաւոր են մանրամասն տեղեկութիւններ պատմողների համար:

Բ.

ՎԷՊԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ

Վէպի տարածուած լինելը:—Ամեն ազգի մէջ ևս մի որևէ կամ մի քանի նշանաւոր պատմական դիպուած առաջ են բերում լրագրական զգոնաստեղծութիւն, և այս կամ այն վէպը ծնունդ է



առնում մի որոշ տեղում, որ աւելի շահագրգռուած է պատահած դէպքով, և ապա, եթէ յօրինուած վէպն իւր մէջ ունի կենդանի ազգային սաղմեր, տարածւում է ազգի մէջ ուրիշ կողմեր, ընդունելի է լինում ամբողջ ազգից և դառնում համազգային վէպ:

Մեր վէպը ծնունդ է Սասնոյ և յատկապէս Տարօնոյ թէ ինչպէս է ծագումն առել վէպը, կաշխատենք ցոյց տալ մեր յօդուածի շարունակութեան մէջ: Բայց այստեղ այժմ թէ արդեօք վէպը որքան տարածուած է եղել և է հայոց մէջ և որքան կարելի է ընդհանուր ազգային վէպ համարել:

Դժբախտաբար մենք միայն վերջին տասնամեակներում ենք իմացել թէ ժողովրդական վէպ ունենք, այն էլ դեռ, ինչպէս տեսանք, լու հետազօտուած չէ, և չգիտենք՝ որտեղ պատմում են, որտեղ ոչ: Մեր գիտցածը շատ քիչ է, բայց այդ էլ ցոյց է տալիս, որ վէպը բաւական տարածուած է:

Մենք այժմ գիտենք, որ վէպը սկիզբն առնելով Սասունում¹⁾ ու Տարօնում, պատմւում է Բաղէշու և Մշու կողմերը, Խլաթում, և ապա Բուլանձրում, որտեղից անցել է դէպի հիւսիս՝ Արճէշ և Կաղզուան, ուր 18-րդ դարում արդէն կապուած է եղել որոշ տեղի հետ: Այնուհետև մտած է Այրարատի, Էջմիածնի գաւառը, ուր տեղացիներն արդէն իւրացրել են և արեւելեան բարբառով են պատմում: Վէպը ընտանի է և Արագածի լանջերում, Արարանում: Միւս կողմից՝ Շատախի, Ռշտունեաց ու Մոկաց կողմերում, ուր վէպն այժմ աւելի կենդանի է, անցել է Վան՝ կապուելով Մհերի դուան հետ, և այնտեղից Արագայի գաշտով մտել է պարսկահայք, յատկապէս Խոյի և Մակուայ կողմերը, ուր նոյնպէս ցոյց են տալիս վէպի դործողութեան տեղերը:

Յիշատակութիւն կայ (8-րդ դ. եր-401), որ վէպը մտած պիտի լինի և Շիրակայ, Բամբակաձորի, Լօռուայ ու Ախալքալաքի գիւղերը, բայց այդ տեղերում պատմուածք գրող դեռ չի եղել: Հետաքրքիր է մանաւանդ Լօռուայ պատմուածք ունենալ, քանի որ Լօռին իւր փահլեամներով գուրս է գալիս վէպի բաղմաթիւ պատմուածքների մէջ: Թէ այստեղ վէպը բնիկ պիտի լինի, երևում է մի պատմուածքից (3-րդ. ա. եր. 46 ծան. 3). Արարանի և Լօռուայ մէջ ցոյց են տալիս մի սարահարթ, «Ջանգառայ դուրան», իբրև այն տեղը, ուր Դաւիթը Լօռուայ Համգայ փահլեամի դէմ կռիւ գնալիս հանդիպում է Սուրբ Սարգսին, ուր և Խանդութն ու

¹⁾ Մինչև այժմ Սասունի պատմուածք չունինք Գ. Ա. Իսահակեանը 1901 թ. յայտնեց, որ Կաղզուանում ապրում է մի ծերունի Սասունցի, որ իրեն համարում է Մհերի սերունդ Մհերեանց անից, և գիտէ վէպը: Եթէ այդ ծերունին մինչև այժմ չի մեռած, յարմարութիւն ունեցողը պէտք է աշխատէ դրել:

Դաւիթը մենամարտում են: Վէպի հետ կապուած տեղեր յիշատակում են և Ոստանայ կապանում, Զիզիրայ քաղաքում, Բաղդադում, և վերջապէս ի հարկէ Սասունում: Լսել ենք, որ վէպը պատմում են և նոր Բայազիդի կողմերն, ինչպէս և Գուլարում ու Դաշքուռում (Սուրմալուի գաւառ):

Այսքան միայն յայտնի է վէպի տարածուած լինելու մասին: Մեր գիտեցածն անշուշտ վերջնական չէ. գուցէ վաղը կամ միւս օր իմանանք, որ մեր երկրի ուրիշ կողմերում ևս, ինչպէս Կարս, Կարին, գուցէ Սիւնիք ու Արցախ, պատմում են վէպը և այս կամ այն ձևով կապուած է որեւէ տեղի հետ, բայց մեր իմացածն էլ արդէն, որ մի քանի տարի առաջ չգիտէինք, ցոյց է տալիս, որ վէպը բաւական տարածուած է Սասունից և Տարօնից դուրս միւս հայերի մէջ և յատկապէս բռնում է մի գօտի միջին Հայաստանում հարաւից դէպի հիւսիս, հարաւային սահմաններից՝ Մոկաց երկրից բռնած մինչև Գուգարք: Մեր երկրի արեւելեան և արեւմտեան կողմերի համար միայն դեռ տեղեկութիւն չունենք: Այս, ինչպէս և այն, որ Սասունից ու Տարօնից դուրս կան տեղեր, որոնք կապուած են վէպի հերոսների անուան հետ, ցոյց է տալիս, որ վէպը թողել է իւր տեղական բնաւորութիւնը և հայ ազգն ընդունել ու իւրացրել է այն:

Սակայն, կրկնում ենք, մեր իմացածն այդ մասին դեռ շատ քիչ է. պէտք է սպասել նոր տեղեկութիւնների, որ անպատճառ կը լինեն. թէպէտև պէտք է ասել, որ ընդհանուր ազգային կենդանի հետաքրքրութիւն մեր վէպով, ինչպէս և հերոսների անուան հետ կապուած շատ տեղեր մենք այլ ևս չենք գտնիլ, այն պարզ պատճառով, որ վէպը հնացած է: Դիւցազնական վիպական շրջանը վաղուց անցել գնացել է մեզ համար:

Այդ ընդհանուր հետաքրքրութիւնը դարեր առաջ է ընկնում և կարծում ենք, մինչև 16—րդ և 17—րդ դարի մէջ, երբ իրօք մի դիւցազնական վիպական շրջան է եղել մեզ համար, մեզ հետ և մեր դրացի թուրքերի համար. կազմուել են նոր վէպեր, մասամբ հայերի ձեռով, Քեօռօղլուի, Շահիսմայիլի և այլն մասին. երբ մեր ժողովրդի զարգացած մարդն էլ հաւատում էր դրանց, այդ վէպերի մէջ կատարուած հրաշալիքներին: Մեր ժողովուրդն այժմ այլ ևս այնպիսի կեանքով չի ապրում, որ հաւատայ օրինակ, թէ Ալգետի վրայ կռուեն և կռուի շահից փախած ուղտերը մի գիշերուայ մէջ Ալգետից հասնեն մինչև Շիրազ: Ճիշտ է, հայ ազգի մի մասը դժբախտ հանգամանքների շնորհիւ այնքան յետ է մնացել, կամ յետ գնացել, այնքան կտրուած է ընդհանուր քաղաքակրթութիւնից, որ դեռ հաւատում է հրաշալիքների,—

որ ժողովրդական վէպի ծաղկման անհրաժեշտ պայմաններից մէկն է,—չի զգում պատմութեան միակերպութիւնն ու ձանձրալիութիւնը. բայց այդ միայն մեր ժողովրդի փոքրամասնութիւնն է: Հայ ազգի մտաւոր մշակութիւնն այժմ ընդհանրապէս այնքան յառաջադիմած է, որ մեր հասարակութիւնն այլ ևս չի կարող այնպէս միամիտ ու դիւրահաւան լինել, ինչպէս որ պահանջւում է վիպական շրջանում: Այժմ մեր ժողովրդի միայն շատ յետ մընացած ու խաւար մասն է հետաքրքրւում վէպով, նա էլ այն դրութեան մէջ է, որ շատ-շատ՝ պէտք է հին վէպը պահպանի և պահպանի հետզհետէ մոռացութեան տալով: Եւ եթէ ապագայում յայտնի լինի, որ գրեթէ բոլոր մեծ Հայաստանում պատմում են վէպը, այդ միայն ցոյց կը տայ, որ մեր վէպը ժամանակով ընդհանուր տարածուած է եղել և, իբրև ընդհանուր ազգային վէպ, հասարակաց հետաքրքրութեան առարկայ եղել: Բայց այժմ այդ անցած է: Վէպն այժմ ամենքը չգիտեն և որ գլխաւորն է՝ ամենքն այլ ևս սիրով չեն լսում այն. այլ միայն մէկ-մէկ և տեղ-տեղ են պատմում:

Վիպասաններ եւ իրենց արուեստը:—Ո՞ւմ մէջ է պահպանւում այժմ վէպը և ի՞նչպէս: «Ցարդ ունեցած հետաքրքրութենէս, գրում է Հայկունին (8-րդ, ա. եր. 16), այն եզրակացութեան հասած եմ, որ Սասունայ Դաւիթ և Մհեր դիւցազնական վէպը մոկացի գզրարարներ տարածած են հեռու գաւառներ, նաև փոքր մասամբ կոմսանցի և ոգմեցի գզրարարներ: Սոքա իրենց արհեստը ուր որ ի գործ կը դնեն, անդ ևս կը պատմեն Սանասար ու Բաղդասար, Դաւիթ և Մհեր, նաև այլևայլ հեքիաթներ: Գարուն, ամառ, աշուն սոքա կը տարածուին Բշերի, Ռաւանդա, Մահմտանք, Մուշ, Բուլանըխ, Խլաթ, Արծկէ, Արճէշ, Ապաղա և այլն. իսկ ձմեռն ևս Աճամ (Երևանայ նահանգ): Խումբ—խումբ կը տարածուեն ամեն կողմեր. իւրաքանչիւր խումբ 5—10—15 հոգի կը լինեն...: Գրգրարարներն խիստ չարքաշ կեանք ունին. գիւղէ գիւղ, տնէ տուն ման կը գան, ցրտին և անձրևին երբեմն դուրսը, երբեմն ներսը, երբեմն նօթի, ծարաւ և առանց անկողնոյ շատ անգամ չոր հողի վրայ, գլխու ներքև իբրև բարձ մի քար դրած կը մրափեն: Իւրաքանչիւր խումբ ունի մի հատ նաղլ ասող, որպէսզի թէ իրենք այդ չարքաշ կեանքի մէջ զբաղուին և թէ որ գիւղ գնան՝ զբաղեցնեն նոյն գիւղացիքը:

Որ մէկ խմբի մէջ որ լաւ նաղլ ասող կայ, այդ խմբի պատիւը շատ է. նոյն խմբին լաւ և առատ ուտելիք կը տրուի: Մի խումբ երբ առաջին անգամ մի գիւղ մտաւ, գիւղի օդայի տէ-

րը կամ ուսը կը հարցնէ. եթէ իրենց մէջ լաւ նաղլ ասող լինի, կընդունէ»:

Ահա թէ հւմ մէջ է մնացել այժմ վէպը: Դրանք թափառական գղրարարներ են, բուրդ ու բամբակ գողոյներ: Դրանք իրենց ապրուստը հայթայթում են գիղ անելով, որի համար վարձ ստանում են սովորաբար բուրդ ու բամբակ: Իսկ «նաղլ ասողն» իր «նաղլի» համար վարձատրւում է միայն առատ ուտելիքով և լաւ ընդունելութեամբ: Այսպիսի գղրարար (8-րդ. ա. եր. 16), գղրարար և շալ գործող (9-րդ. բ. եր. 401), հունձ անող, «քէչայ ձգող» բամբակ գող ու շալ գործող (7-րդ. ա. եր. 3) են մեր ունեցած մի քանի պատմութեան ժողովրդի ասողները: Ճիշտ է, դրանք երբեմն հարկւրաւոր գիւղեր ման են գալիս և ամեն տեղ ասում են վէպը, բայց ոչ իբրեւ վիպասան և վէպ ասելու ու վէպի համար վարձ ստանալու նպատակով, այլ իբրեւ արհեստաւոր իրենց արհեստը—գղրարարութիւն, հունձ անել, շալ գործել, քէչայ ձգել—բանեցնելու համար:

Բացի այս թափառական «նաղլ ասողներից» կամ լոկ «ասացողներից», ինչպէս կոչւում են այժմ վիպասանները, կան և ուրիշ թափառական ասացողներ, որոնց գլխաւոր պարապմունքն է, իբրեւ գիւղացի մարդու, երկրագործութիւն, կտաւագործութիւն, բայց որոնք աղքատութեան պատճառով նստական կեանքով չեն մնում իրենց հայրենի գիւղում, այլ աշխատանքի համար երկար տարիներով պանդխտում են այս կամ այն քաղաքը և պարապում զանազան գործերով: Դրանք ևս տարածւում են վէպը: Այսպիսիներից է 2-րդ պատմութեան ասացողը, որ մշակութեամբ և ծառայութեամբ քանի անգամ Կ. Պոլիս ու Տրապիզոն է պանդխտել և ապա երկար տարիներ էջմիածնումն է մնացել և այժմ ևս այստեղ է. 6-րդ պատմութեան ասացողն ևս երեք անգամ տարիներով Կ. Պոլսում բանել է ջրաղացում, իսկ յետոյ էջմիածնումն է ապրել իբրեւ ծառայ: Այսպիսիներից են և 3-րդ, բ. գ. դ. 8-րդ. բ. 9-րդ. ա. պատմութեան ժողովրդի ասացողները: Բայց կան և երեսփոխան (1-ն եր. 127) և ժամհար (3-րդ. ա.) և գիւղական պարապմունք ունեցողներ (4-րդ. 7-րդ. բ.): Բոլորի ընդհանուր պարապմունքն է սակայն հողագործութիւն, որ հարկաւոր դէպքում, ինչպէս մեր գիւղացիներից շատերը, թողնում են և ուրիշ բանի ձեռք տալիս:

Ասացողներն այժմ ուրեմն պատահական մարդիկ են, որոնք լաւ յիշողութեան տէր լինելով՝ մանկութեան ժամանակ իրենց համագիւղացիներից, մեծ մասամբ ծերունիներից, կամ իրենց բարեկամներից, հորից կամ պապից լսելով սովորում են և իրենք

ևս պատմում: Սասնու ծոերի աւանդութիւնը կը նշանակէ նոյն ձևով է պահուում այժմ ժողովրդի մէջ, ինչպէս ամեն հեքիաթի և զրոյցի: Զկան ուրեմն յատուկ վիպասաններ, որոնք իրենց համար առանձնապէս պարապմունք շինած լինէին վէպ պատմելը և դրանով ապրէին, ինչպէս աշուղները կամ ուրիշ ազգերի մէջ ժողովներն ու տրուվէրները եղել են: Վիպասանութիւնն այժմ մեզնում ապրուստ չի տալիս, որովհետեւ, ինչպէս ասացինք, վէպն այլ ևս ամեն տեղ սիրով չեն լսում: Մեր աշուղները դժբախտաբար թուրքական, դուցէ և մասամբ հայի յօրինած, վէպերն են ասում ու երգում. բայց այդ էլ հետզհետէ վերանում է:

Ասացողների և նրանց հասարակութեան այս վիճակից անաջանում են վէպի երկու էական յատկութիւնները: Նախ վէպը թէպէտ և պատմում է Սասնու տէրերի, հայ ազնուականների և իշխանների մասին, բայց գրեթէ ոչ մի ազնուական բան չունի իր մէջ. այլ ազնուական և նոյն իսկ թագաւոր անուան տակ դուքս են գալիս մեր գիւղացիները: Վէպն ամբողջապէս ռամկական, գեղջկական բնավորութիւն ունի. հայ հասարակ ժողովրդի կեանքն ու հոգին ենք տեսնում այնտեղ, նրա նիստ ու կացը, պարապմունքը, բարբերը և այլն: Ապա վէպն այժմ ընդհանրապէս խանգարման վիճակի մէջ է. պակասում է արուեստավորութիւնը, որովհետեւ այժմ այլ ևս չկան արուեստավոր վարպետ ասացողներ:

Արդարեւ այժմ ևս կան ասացողներ, որոնք վարպետ են համարւում, բայց ոչ պարապմունքով ու արուեստով, այլ այն պատճառով, որ շատ վէպեր և հեքիաթներ գիտեն և աւելի յաճախ ու սիրով են պատմում. ուստի և ուրիշների համար իբրեւ վարպետ են հանդիսանում: Վարպետն ուրեմն վարպետ է ոչ թէ նրա համար, որ արուեստավոր է և աշակերտներ է պահում յատուկ ու սովորեցնում, այլ այն պատճառով որ իրենից սովորում են ուրիշները, բայց պատահաբար իսկական վարպետներ, որ վէպը պատմել և ուրիշներին սովորեցրել են, մինչև այժմ յայտնի են երեք հոգի, երեքն էլ այժմ մեռած: Դրանք են աշուղ Բարսամբ, Մանասէրը, և Պօղոսը: Վարպետներն այժմ անցած սերնդին են պատկանում:

Թէ ինչպէս է եղել հին վարպետների արուեստը, այդ իմանում ենք այժմեան ասացողների մէջ մնացած միջանի յատկութիւններից: Նրանք կազմել են վիպասանական դպրոց, որի մէջ աշակերտները առանձին ակնածութեամբ են վերաբերուել գէպի վարպետները և փոխադարձ հակողութիւն են ունեցել իրար վերաբերմամբ:

Ինչքան էլ այժմեան ասացողների վարպետները պատահական մարդիկ են, բայց և այնպէս նրանցից սովորողները բոլորը մի

ընդհանուր ակնածութեամբ մեծացնում են իրենց «վարպետներին», իսկ իրենք իրենց նուաստացնում են նրանց առաջ: Այսպէս՝ մէկը (1-ն, եր. 27) յայտնել է «թէ իւր վարպետը շատ ընդարձակն գիտէր այս պատմութեան, և թէ մէջ ընդ մէջ շատ տեղեր ոտանաւոր խաղեր կային, որ ձայնով կերգէր: Թէ այդ վարպետը երկու վռշիկ աշակերտ ունէր, որոնք շատ կատարեալ սորուած էին, և թէ ինքն՝ բաւական ժամանակ պատմած չլինելով, մոռացած էր»: Նոյնպիսի կարծիք ունի իւր վարպետի մասին և 2-րդ պատմուցքի ասացողը: Իսկ 7-րդ, ա. պատմուածքի ասացողը յայտնել է (եր. 31), թէ սովորել է իւր համագիւղացիների մէկից, «որ գիտէր այս նաղլի 7 ճիւղն էլ, այն ևս՝ լաւ»: Մի ուրիշը (8-րդ. ա. եր. 17) Սախոն սովորել է իւր պապ Պօղոսից, «որ լաւ երգիչ էր, ծաղիկներու և բոյսերու վրայ երգեր կըյօրինէր, Դաւթի 7 ճիւղն էլ խիստ մեծ յաջողութեամբ կասէր, և 150 տարի ապրած է»: Իսկ Պօղոսի հայրը Մուրադ «գեղեցիկ սրինգ կածէր»: Մի ուրիշն ևս (9-րդ բ. եր. 401) սովորել է «Բարսամ անուն աշըղէն, որ շատ հմուտ էր ժողովրդական աւանդութեանց, հեքեաթներուն, շատ լաւ գիտէր Դաւիթ և Մհէր: Բարսամն էլ «սովրած էր իր հօրմէն—Մանասէրէն, որ կասէն շատ հանճարեղ կոյր էր, նրա յիշողութիւնը շատ թարմ էր... աստուածատուր աշըղ էր... սուտ չէր խօսէր. կիրակին սուրբ կը պահէր և տնեցոց ևս թոյլ չէր տար, որ նոյն օրը գործով պարապեն»:

Աշակերտական ակնածութիւնն ու երախտագիտութիւնն առ վարպետները՝ յայտնւում էր անշուշտ և վէպի մէջ, որի մնացորդը գտնում ենք այժմ միայն մի պատմուածքի մէջ, (3-րդ. դ. եր. 136): Ասացողը Դաւթի ճիւղը վերջացնելուց յետոյ երգով ողորմի է տալիս վէպի անցեալ հերոսներին և վերջն աւելացնում է. «Աստուած ողորմի մեր փիւր վարպետին, ինչ մեզի շանց ի տուի»:

Այս ամենը ցոյց է տալիս, որ իրենք ասացողները վէպի ծաղկման շրջանն իրենցից առաջ են դնում: Լաւ պատմողներն անցել զնացել են. իրենք նրանց մօտ թերի պատմողներ են: Անշուշտ լոկ աշակերտական ակնածութիւնն չէ այս, և ոչ էլ ծագում է միայն մարդկային հոգու այն ընդհանուր յատկութիւնից, որ անցեալին երանի են տալիս. այլ դա իրական է: Վէպն իրօք անկման ու խանգարման մէջ է:

Ասացինք՝ առաջ վիպասանները իրար վերաբերմամբ փոխադարձ հակողութիւն են ունեցել: Դրա մնացորդներն այժմ ևս տեսնում ենք: Վարդանը «իբրև Աստուծմէ շնորհեալ մի աւանդ կը պատմէր. շատ անգամ լըջութեամբ կը զայրանայ այն անձանց վրայ, որ իր գիտցածէն աւելի կը պատմեն և այդ աւելին

յերիւրած, շինծու կը համարէր, հետեալաբար աւելն ևս մեղք. քանի որ շողորմիներն կան, ինչ որ աւանդուած է, այնպէս ասելու է, կասէր նա: Այս ծերունի Վարդանը, ինչպէս լսել ենք պէշայկունաց, յանդիմանելիս է եղել Յ-րդ պատմուածքի ասացող Զատիկին թէ ինչո՞ւ փոփոխութիւններ է մտցնում: Զատիկն էլ արդարանալիս է եղել թէ ինքը չէ փոփոխում, այլ ինչպէս իւր վարպետից լսել է, այնպէս է պատմում:

Բարերախտաբար պատմողները և լսողները դեռ Վարդանի պէս պարզամիտ մարդիկ են, մեծ մասամբ միամտութեամբ հաւատում են իրենց պատմածին ու մեղք են համարում մէջը նոր բան մտցնել. բայց այս չէ արգելում, որ վէպը փոփոխութեան ենթարկուի ու խանգարուի, թէպէտ և ոչ ղիտաւորեալ կերպով: Քանի որ շատ քչերը գիտեն վէպը և վիպասանական դպրոց չկայ այլ ևս, որ աւանդութիւնը ճշտութեամբ պահէ, ուստի և փոխադարձ հսկողութիւնը վերացած է, և վէպն արագութեամբ ու հեշտութեամբ կորցրել ու կորցնում է իւր նախնի հարազատութիւնը: Դրան նպաստում է և մի ուրիշ հանգամանք: Այժմ ասացողն իբրև արուեստ հաստատուն չէ ուսած վէպը և այնուհետև ևս իբրև արուեստ միշտ չէ կրկնում անփոփոխ բառացի. այլ երբեմն երբեմն պատահած տեղը. ուստի և հեշտութեամբ կարող է մոռանալ, ինչպէս մի քանի պատմողներ իրենք խոստովանում են: Բայց հէնց որ պատմողը մի բան մոռացաւ, տեղը բաց է մնում, կամ նոր հեքաթային բան մտնում մէջը, կամ նոր կեանքի գծերով վէպն աղհատում է յօրինուածի նկատմամբ: Մասերն ու միջադէպները յետ ու առաջ են ընկնում, մի հերոսի արարք մի ուրիշի է վերագրւում, առաջ են գալիս հակասութիւններ, կրկին պատմուածքներ, այսինքն միևնոյն բանը փոքր ինչ տարբեր ձևով երկու անգամ է պատմւում կամ նոյն հերոսի համար կամ երկու երեք հերոսի համար ևս և այլն: Վէպն այսպիսով կորցնում է իւր գեղեցկութիւնը ու ճշտութիւնը:

Այսպէս չի աւանդուել վէպը վարպետների դպրոցում: Թէ նրանք հաստատուն սովորած են եղել և սովորածը աշխատել են միշտ բառացի կրկնել, այդ կարող ենք հետեւեցնել այժմեան ասացողների մէջ յարատևող այն հին արուեստաւորութեան մնացորդից, որ դեռ քիչ ու շատ փոփոխութեան առաջն աւանում է: Այժմ ևս ասացողներից մի քանիսը անգիր արած են պատմում և երկրորդ ու երրորդ անգամ պատմելիս բառացի, առանց նկատելի փոփոխութիւնների են ասում, կամ ճշայր մերի պէս սերտած ու վարժ: Ասացողներն ուրեմն թիւ ուսածն են ասում, կամ թւում են, ինչպէս մեր հին վիպասանքը, որ կոչւում էին և

«Թուելիք»: Այսպէս թիւ ուսած պատմել են անշուշտ և հին վարպետները և աւելի մեծ ճշտութեամբ:

Հին վարպետներն եղել են և արուեստաւոր երգիչ: Բարսամի, Պօղոսի և Մանասէրի նման աշուղներն ասել են վէպը և նրա մէջ եղած երգերը երգել են ամենայն հաւանականութեամբ որեւէ գործիքի նուագակցութեամբ: Այժմ ասացողների ձեռքին գործիք չկայ, և թէ կայ՝ մեզ յայտնի չէ: Վէպի մէջ աշուղները դամբուռ կամ սաղ են բանեցնում, և նոյն իսկ Դաւիթը, որ քաջ երգիչ է, սաղ է բանեցնում երգելիս: Եւ քանի որ ասացողներն այժմ երգում են այն կտորները, որ վէպի մէջ իրենք գործող հերոսները երգում են, պէտք է կարծել, որ հին վարպետները այս նմանողութիւնը կատարեալ անելու համար հերոսի երգը այն գործիքի նուագակցութեամբ պիտի երգէին, որ բանեցնում է ինքը հերոսը, ինչպէս Դաւիթը: Գործիքի այսպիսի նուագակցութիւն գտնում ենք և մեր ժողովրդի մէջ տարածուած թուրքական վէպերի համար, ինչպէս են՝ Քօռօղլուի և այլն: Աշուղներն այս վէպերն ասելիս, դեռ չըսկըսած, նուագում են մի քանի բոլակ՝ ընդհանուր տրամադրութիւն առաջ բերելու և չափ տալու համար: Նոյնը պէտք է ենթադրել և մեր հին վարպետների համար:

Թիւ ասելու և գործիքի նուագակցութեան բնական հետեւանքըն այն է լինում, որ վէպը ձևով չափածոյ, այսինքն ոտանաւոր է լինում. իսկապէս ասած, ստանում է խօսքերի համաչափութիւն, եղանակաւորութիւն, cadence ասածը, նուագաւորութիւն: Մինչև այժմ ևս շատ տեղ այդ չափը, քանի որ դեռ թիւ են ասում, որոշ լսում է. սակայն ոչ բոլոր պատմուածքների մէջ, այլ միայն մոկաց պատմուածքների մէջ և յատկապէս և լուս ասողների բերանին: Բայց այստեղ ևս կարճ խօսակցութիւնների մէջ իզուր կը լինէր որեւէ չափածոյութիւն որոնել: Ոտքը, իսկապէս մի տեսակ եղանակաւորութիւն լսելի է միայն մեծ պատմական ու նկարագրական հատուածների մէջ և այդ ոտքը նոյնն է ինչ որ երգուած մասերի մէջ:

Պէտք է կարծել, որ հին վարպետների բերանին չափածոյ խօսքն աւելի մեծ տեղ է բռնել և արուեստաւոր ասացողների տեղ երբ անցել են պատահական ասացողներ, վէպի լեզուն չափածոյից դարձել է արձակ, կամ հին ոտանաւորը տեղի է տուել մի ոտանաւորի, որի մէջ իշխող է արձակը: Եւ եթէ մոկաց պատմուածքների մէջ երբեմն դեռ երևում է չափը, այդ այն պատճառով է, որ վէպն այժմ ամենից կենդանի մնում է մոկացոց մէջ և վէպն ասող մի երկու վերջին աշուղ ևս, որ յիշում են, ինչպէս տեսանք՝ մոկացի են: Փոփոխութեան այս երևոյթը միայն մեր վէպի մէջ չէ

նկատուամ. ուսաց ժողովրդական վէպն ևս յետագայ շրջանում
ոտանաւորից վերածուել է արձակի. БЫЛИНА ասածները, որ ոտա-
նաւոր են, դարձել են ПОБЫВАЛЬЩИНА ասածները, որոնց մէջ իշ-
խում է արձակը:

Մեր վէպի գրեթէ բոլոր պատմութեանքի մէջ ևս կան հա-
տուածներ, որոնք պարզապէս ոտանաւոր են: Այդ այն կտորներն
են, որ ասացողները ոչ թէ թւում, պատմում են, այլ երգում: Սա-
կայն այստեղ ևս պէտք է նկատել, որ ասացողներից մի քանիսը
այդ հատուածները դարձեալ ասում են և ոչ թէ երգում: Այսպէս
օրինակ՝ Սրուանձտեանի պատմութեան մէջ թէպէտ և կան մի քանի
ոտանաւորներ, որ ուրիշ պատմութեանքի մէջ երգւում են, բայց
Սրուանձտեան երգ չէ լսել: Ասացողը միայն յայտնել է, որ իւր
վարպետը «մէջ ընդ մէջ շատ տեղեր ոտանաւոր խաղեր կային,
որ ձայնով կը երգէր»: Այս խաղերի թիւը բաւական շատ են, ա-
ւելի մոկաց պատմութեանքի մէջ: Եղանակը միակերպ է, ծանր
ու տխուր:

Բնական է, որ աւելի քնարական մասերում երգուի. ուստի
երգում են միայն հերոսների բերանից կտորներ, այսինքն այն-
պիսիներ, որ հերոսների խօսքերն են, նրանց աղօթքներ կամ եր-
գերը, որոնց մէջ երևում է և հերոսների զօրեղ զգացումները:
Ասացողն իւր կողմից երգում է միայն ամեն մի ճիւղի սկզբում
հերոսների «ողորմին»՝ իբրև նախերգանք, երբեմն և վերջում իբրև
վերջաբան՝ յիշելով և իւր վարպետին և ունկնդիրներին հօրն ու մօր
հոգին: Բուն վիպական, պատմութեան մասը չի երգւում, գտնէ
մեր ունեցած պատմութեանքի մէջ. թէպէտ և զարմանալի չէր լի-
նիլ, որ այս մասից կտորներ երգողներ լինէին, քանի որ մեր
մէջ դեռ տեղ տեղ, աւելի մոկաց կողմեր, վէպերը երբեմն ամ-
բողջ երգւում են՝ ինչպէս «Կարոս խաչ», «Մոկաց միրզան» և
«Ասլան աղան»:

Այն հանգամանքը, որ վէպը համեմատաբար քիչ մասերում
է երգւում այժմ, և որ մի քանի պատմութեանքի մէջ թէպէտ և
այդ մասերը կան, բայց չեն երգւում, ցոյց է տալիս դարձեալ, որ
մեր վէպը անկման շրջանի մէջ է: Այսպիսի փոփոխութիւն, որով
երգը տեղի է տալիս պատմութեան, տեսնում ենք նաև ուրիշ ազ-
գերի վէպերի մէջ: Օրինակ՝ յունաց վէպը ծնունդ է երգիչների,
որոնք ստեղծում են երգելով. բայց յետոյ երգը տեղի է տալիս
մի պարզ պատմութեան. երգիչը սակայն դեռ երգիչ է մնում, որով-
հետև նա դեռ կիթառ է գործածում նախերգանքի ժամանակ և
մէկ մէկ պատմութեան միջին: Այս երգիչներին փոխանակում
հագներգուներ—ռապսոդները, որ միայն պատմում են ուրիշ-

ների յօրինած վէպերն առանց երգելու և նուագելու: Նոյն փոփոխութիւնը մենք տեսնում ենք և Ֆրանսիական վէպի մէջ, որ իւր զարգացման առաջին շրջանում երգուել է, իսկ յետոյ երկրորդ շրջանում միայն պատմուել:

Արդեօք մեր վէպը սկզբում ամբողջապէս, այսինքն պատմուած մասն ևս, երգուել է թէ ոչ: Նոյն իսկ Խորենացու մէջ դանում ենք, որ մեր հին վիպասանք պատմուել ու երգուել են. ուստի դժուար է կարծել, որ մեր նոր ժողովրդական վէպը մի ժամանակ ամբողջապէս երգուած լինի: Մի բան միայն հաւատաւարող ենք ասել, որ առաջ երգուած մասերն աւելի մեծ թուով եղած պիտի լինին:

Աւելորդ չի լինիլ նկատել, որ մեր երգը կամ ոտանաւորը մեր այժմեան վէպի մէջ աւելի մեծ արժէք ունի քան արձակն ու պատմուածքը, քանի որ այդ ձևը հնութիւնից է գալիս և ոտանաւորը որ երգուում է՝ միշտ աւելի դժուար կարող է փոփոխութեան ենթարկուել քան արձակը. ուստի և աւելի երկար պահել իւր նախնական ձևը: Համեմատաբար պակաս արժէք ունի արձակը, որ հեշտութեամբ աղաւաղուելով ստանում է զրոյցի կամ հեքեաթի բնաւորութիւն: Բայց այդ չէ նկատուում, որ արձակի մէջ ևս պահուած լինին այնպիսի հին գծեր, որ ոտանաւորի մէջ չկան. ընդհանուր առմամբ միայն երգն աւելի հաստատուն է քան պատմուածքը: Եւ մենք այդ տեսնում ենք մեր վէպի մէջ. դանազան պատմուածքների երգուած մասերն իրարու աւելի նման են քան պատմուածքները:

Ամփոփելով մեր մի քանի աղքատիկ տեղեկութիւններից հանած հետևողութիւնները, տեսնում ենք, որ մեր նոր ժողովրդական վէպը, որ բաւականին տարածուած է միջին Հայաստանում հարաւից դէպի հիւսիս, նոյն կեանքն ու զարգացումն է ունեցել, ինչ որ վէպն ընդհանրապէս ուրիշ ազգերի մէջ: Վարպետ վիպասաններին փոխանակում են հասարակ անարուեստ ասացողներ. նուագը մոռացութեան է տրուում. երգն ևս մոռացութեան է տրուած մի քանի պատմուածքների մէջ, ուրիշների մէջ մնացորդներ միայն կան. ոտանաւորը տեղի է տալիս արձակին և մի խօսքով վէպն աղճատուելով հնանում ու մեռնում է, և եթէ բոլորովին անհետ չի կորել, միայն շնորհիւ այն հանգամանքի, որ 19-րդ դարում և այժմ դրա մնացորդները ժողովում ենք:

Բայց ի՞նչ են այդ մնացորդները, վէպ թէ հեքաթ:

Հեքաթ եւ վէպ:—Ի՞նչ է մեր վէպ ասածը, վէպ թէ հեքաթ: Այս հարցը և նրա պատասխանը աւելորդ չենք համարում այստեղ սկզբում դնել, որովհետեւ մեր վէպի մասին շատ տեղեկու-

թիւներ, և շատ պատմութեանքներ ձեռք բերելու համար պէտք է կարողանանք, ինչպէս վերևում ասացինք, գնահատել այն, և ցոյց տալ որ հեքաթ չէ, այլ բնիկ ազգային վէպ: Շատերն իհարկէ վէպ են անուանում. բայց կան և հեքաթ անուանողներ: Պատահել է մեզ նոյն իսկ այդ «հեքաթը» գնահատողների բերանից լսել թէ հեքաթ է այն և ոչ այլ ինչ: Նոյն իսկ գրականութեան մէջ կան մեր նոր վէպը հեքաթ կոչողներ և զրանք չըհասկացողներ չեն¹⁾:

Ժողովրդական վէպ և հեքաթ այն միայն ընդհանուր ունին որ երկուսն ևս ժողովրդական պատմութեանք են և ստեղծագործութիւն. այսինքն իրականութեան բանաստեղծական ըմբռնումն ու արտայայտութիւն: Բայց այստեղ ևս էապէս վերջանում է այդ երկուսի նմանութիւնը. քննարկելով նրանք տարբերում են իրարուց:

Մինչ հեքաթները, ինչպէս և առասպելները, սակաւ բացառութեամբ, ազգային գոյն չունին և ազգային ստեղծագործութիւն չեն, ժողովրդական վէպն ընդհակառակն բնիկ ազգային է թէ իւր բնաւորութեամբ և թէ իւր ծագումով: Մեր վէպը, ինչպէս կրտսանենք, հայ ազգի ստեղծագործութիւնն է և կրում է մեր ժողովրդի կեանքի դրոշմը: Արդարև հեքաթների մէջ ևս յաճախ երևում

¹⁾ Այստեղ յիշենք, օրինակ, որ պ. Ա. Չորանեանը, որ արդէն ծանօթ է իւր գրական գործունէութեամբ, մի յօդուածի մէջ, «Անահիտ» 1901, թիւ 9, «Դաւիթ և Մհեր» վերնագրի տակ, մեծ գովեստներ շաղկերով հանդերձ՝ մեր վէպը շարունակ հեքաթ է անուանում:

«Այս հեքաթին ծննդավայրն է Սասունը, «Դաւիթ և Մհեր» հեքաթն ամեն բանէ առաջ ըմբշի պատմութիւն մըն է», «Այս հեքաթը... և այնու Մի տեղ միայն գտնում ենք «Դաւիթ և Մհեր» հեքաթը միայն աւելի հիշտ՝ դիւցազներգութիւնը: Անշուշտ պ. Չորանեանը չի կարող չիմանալ թէ ինչ է հեքաթ, ժողովրդական վէպ և դիւցազներգութիւն. և նա զգում է ու տեսնում, որ «Դաւիթ և Մհեր» սոսկ հեքաթ չէ. բայց որ շարունակ հեքաթ է անուանում, պատճառն այն է, որ մեր վէպն ուսումնասիրուած չէ իբրև վէպ:—Աւելորդ չի լինիլ ասել, որ Չորանեանն այդ յօդուածի մէջ տալիս է միայն Դաւիթ ու Մհերի ամփոփ ու գրական լիզուով պատմութեանք՝ աւանդով բնորոշ գծեր և շեշտելով հերոսների բնաւորութիւնը: Դրա համար նա յայտը բնորոշութիւն անելով՝ օգտուել է միայն գրեթէ 2-րդ պատմութեանքից, թէպէտ և չգիտենք թէ ինչո՞ւ չէ յիշում այդ: Երևի Յրանսիայի (այդ յօդուածը Ֆրանսիայէնից թարգմանութիւն է և հայ ընթերցողների համար աւելորդ է համարուել: Բայց այդպիսով յօդուածից այնպէս կրկնարծուի, որ իւր թէ մեր վէպը մի որոշ միատեսակութիւն ունի:

են ժողովրդական բարքեր ու սովորութիւններ, բարոյական կանոններ և աշխարհայեցողութիւն, մինչև անգամ հաւատալիքներ, բայց այդ ամենն անպատճառ պատմող ազգինը չեն, ինչպէս և շատ սակաւ անգամ է պատմող ազգն ինքն ստեղծում հեքաթներ ի նիւթը: Հեքաթները փոխառութիւն են այս կամ այն ազգից, և ամենամեծ մասամբ նոյն իսկ անհնարին է, որքան էլ հետազոտութիւններ լինին, որոշել թէ որ ազգից որին է անցել այս կամ այն հեքաթը, էլ չենք ասում թէ որ ազգի մէջ ծնուել են: Այսպիսի դրութեան ժամանակ մի ազգ մի հեքաթ փոխ առնելով շատ շատ՝ երբ սիրելի է դառնում իրեն, իւրացնում է և տալիս նրան իւր ազգային գոյնը:

Հեքաթի բնորոշ գիծն է հրաշալին, անիրականը: Այնտեղ բնութեան և ընկերական կեանքի բազմազան երևոյթները պատկերանում են մտացածին յաճախ ֆանտաստիքական կերպարանքով՝ զարդարուած ամեն տեսակ հրաշալիքներով: Ոչ պատմողը և ոչ լսողը չեն հաւատում հեքաթի գործողութեանը իբրև իրականութեան, և շատ գեղեցիկ կերպով այդ հաւատքը բնորոշւում է հեքաթի այն երկրայական բանաձևով, որով սկսում են հեքաթները. «Եղել է, չի եղել», «կար, չկար»: Հեքաթներին չի հաւատում պատմողը, որովհետև նրանց մէջ պատմուած հրաշալին այլ ևս ժողովրդի կենդանի կրօնական հայեացքի հետ չի կապւում: Նրանց մի մասը հին հեթանոսական առասպելներից են գալիս, ուստի և հնացած են ու անհասկանալի. մի ուրիշ մասը դրսից եկած լինելով խորթ և օտար են. կան և հեքաթներ, որոնք հին առասպելների շէնքի բեկորներից, իբրև պատրաստի ատաղձից, կարկատած բաներ են, ուստի և յաճախ անհեթեթութիւն: Այդպէս չէ սակայն ժողովրդական վէպը. նրա մէջ ևս կան հրաշալիքներ, բայց դրանք բացատրւում են ժողովրդի կենդանի հաւատքով: Օրինակ եթէ Դաւիթը խաչ—պատարագի զօրութեամբ ամեն տեսակ հրաշքներ անում է, այդ հնարաւոր է, որովհետև ինչպէս ասում է մի ասացող. «էն ժամանակ արդար մարդ էին, ինչ մուրազ ունէին Աստուած կը կատարէր» (2-րդ 41): Հէնց այդ պատճառով բոլոր ասացողները հաստատ հաւատում են, որ Դաւիթ, Մհեր և ուրիշները իրօք եղել են և կատարել այն գործերը, որ պատմում են նրանց մասին: Ինչպէս որ հեքաթը, նոյնպէս և վէպը կամ նաղը սկսւում է իւր որոշ բանաձևով, անցեալ հերոսներին «ողորմի» տալով: Բացի այդ՝ հերոսների իրականութեան ապացոյց, համարւում են և նրանց անունով կոչուած տեղերը, որ այս ու այնտեղ ցոյց են տալիս:

Բաւական չէ որ պատմողը վէպին հաւատում է իբրև ճշմարիտ

եղելութեան, այլ և հայ ազգի պատմութիւնն է համարում այնու
 Եւ իսկապէս վէպն իրական պատմութեան հետ շատ ընդհանուր
 տարրեր ունի: Մինչ հեքաթը, սակաւ բացառութեամբ, ոչ միայն
 ժամանակից, այլ և տեղից կտրուած է, վէպը իրական պատմու-
 թեան հետ այն ընդհանուր ունի, որ նրա գործողութիւնները
 կապուած են որոշ աշխարհագրական տեղերի հետ, և յատկապէս
 այն տեղերի հետ, որոնք վէպի սկզբնաւորութեան ու զարգացման
 շրջանում մեծ դեր են կատարել մեր ազգի պատմութեան մէջ:
 Մենք այդ կտեսնենք ներքեւում: Բայց այդ՝ վէպի հերոսները,
 ինչքան էլ առասպելական դիւցազնական կերպարանք են ստացել,
 մարդկային ու պատմական են: Վէպի մէջ պատմութեանը ժո-
 դովրդի կեանքից առած պատմական նշանաւոր դիպուածների
 յիշողութիւններ են, միայն բանաստեղծօրէն պատմուած և այլա-
 փոխուած:

Խնչպէս է առաջանում այս այլափոխութիւնը: Պատմական
 յիշողութիւնը դարեր շարունակ ապրելով ժողովրդի մէջ՝ վիպա-
 սանների բերանին հէնց ազգային կերպով փոփոխութեան է ենթարկ-
 ւում: Բայց այսպիսի փոփոխութիւն էական նշանակութիւն չունի
 իրական պատմութիւնն այլափոխուելու համար: Աւելի մեծ է այն
 փոփոխութիւնը, որ կատարւում է ուրիշ նշանաւոր իրողութիւն-
 ներից և պատմական անձերից, որոնց յիշողութիւնն ևս պահւում
 է զանազան զրոյցների ու երգերի մէջ: Ժողովրդական վէպը ժա-
 մանակագրութիւն չունի. նրան յատուկ է անաբրոնիզմ: Ուստի
 տարրեր դարերում ապրող անձեր՝ դրւում են իբրեւ ժամանա-
 կակից և նոյն իսկ ազգակից. տարրեր անձերի տարրեր ժամա-
 նակներում կատարած արարքները հաւաքւում են ի մի և վերա-
 գրւում մի անձի, ինչպէս և բազմազան ու բազմաթիւ զրոյցներ,
 նիւթով ցեղակից լինելով, միանում են ու մի ամբողջութիւն
 են կազմում: Մի հին ժողովրդական հայեացք է՝ ցեղակցութիւնն
 ու ժամանակակցութիւնը տեսնել ոչ ըստ մարմնի, այլ ըստ հոգու:
 Այս հայեացքը ժողովրդից անցել է հին պատմագիրներին, որոնց
 գրածը շատ բանում չի տարբերւում ժողովրդական վէպից, որով-
 հետեւ այդ պատմագիրները չեն զանազանում բանաստեղծութիւն,
 հին առասպել և պատմութիւն: Այսպիսի է, օրինակ, Յորենացու
 պատմութիւնը, որի մէջ գտնում ենք և ցեղակցութեան ու ժամա-
 նակակցութեան այս հին վիպական ժողովրդական հայեացքը: Նա
 Ա. զրբի Ե. զլխի մէջ յայտնում է թէ Նինոսը Բէլի որդին չէ,
 բայց կան այդպէս ասողներ, որոնց շրջա նշանաւոր և անուանի
 լինելոյ պատեհ են համարել այդպէս կարգել զհեռին մօտաւոր:
 Եւ ինքն իսկ Յորենացին ուրիշ տեղ (Ա. լա.) գրում է. «Միրեմ

կոչել այսպէս ըստ քաջութեան՝ Հայկ, Արամ, Տիգրան. քանզի ըստ իմ քաջաց ազգք քաջքն. իսկ միջոցքն որպէս դէպ ումեք թուիցի կոչելն:

Այս նախնական հայեացքով քաջերը բնականաբար իրար ցեղակից ու ժամանակակից են համարուում, ուստի և ժողովրդական վէպի մէջ դրանք համախմբուում են մի մեծ հերոսի շուրջ. ինչպէս ուսաց վէպի մէջ, կամ, ինչպէս յունաց վէպի մէջ մի նշանաւոր իրողութեան շուրջ՝ իրար ժամանակակից ու մի մեծ գործի մասնակից դրուելով—կամ թէ սկզբնապէս իրարուց անկախ զրոյցների հերոսները եղբայրներ, ճայր ու օրդի են դառնում և որդէ ցորդի յաջորդում իրար: Այս վերջին ձևն է ընտրել հայ ժողովուրդը թէ մեր հին վիպասանքի և թէ մեր նոր վէպի համար. Սանասար, Առեւծածէ Մհեր, Դաւիթ և Պատիկ Մհեր քաջերի մի սերունդ են, որոնց շուրջը և իբրև ազգական դրուած են Ձէնով Յովան, Քեռի Թորոս, Տոան Վերգոյ և ուրիշները: Այս հայեացքի ըստ հոգու ցեղակցութեան, արդիւնք է և այն, որ մեր Սասնոյ Ծռերն ու պարսից վէպի հերոսները ցեղակից են դարձել ժողովրդի աչքին. Ջալը Սասում քաղաքի Թազաւոր է դարձել, Դաւիթ՝ Ջալի եղբայրը, Բուրվէն՝ Դաւթի որդին. Ռուստամը Սասունցի է և այլն. ուրիշ խօսքով՝ պարսից վէպի հերոսները՝ փոխադրուել են Սասուն և «Սասան Ծռեր» դարձել:

Այսպէս դանազան ժամանակներում ապրող պատմական անձերը իրերի հոգով ժամանակակից ու ազգական են դառնում և տարբեր ժամանակներում կատարուած դէպքերը վէպի մէջ խառն ի խառն կուտակուում են իրար վրայ: Հինը յաճախ մնում է. թէև մթնացած ու յետ մղուած, հնի վրայ աւելանում է նորը, յետագայ ժամանակներում կատարուած դէպքերի յիշողութիւնը, և կազմուում իրօք մի այլափոխ պատմութիւն, որի միջից գլուխ հանելը դժուարանում է մանաւանդ այն պատճառով, որ ժողովրդի երևակայութեամբ բուն պատմական վէպը կամ զրոյցն անզգալի կերպով հաճնում է առասպելի զգեստ և պատմական անձերը դառնում են դիւցազուններ:

Բացի այդ՝ յաճախ ազգային պատմական կեանքից կազմուած վէպի վրայ հին պատրաստի առասպելաբանութիւնից աւելանում են և ընդհանուր առասպելներ, որոնք մի ազգի չեն միայն յատուկ, և որոնց մէջ, ինչպէս ընդհանրապէս ամեն առասպելի, բը նութեան բանաստեղծական ըմբռնումն է արտայայտուում. աւելանում են և հեքաթային տարրեր, մանաւանդ երբ վէպը խանդարւում է, այլ և ուրիշ ազգերից փոխառած բանաւոր և գրաւոր զրոյցներ, մեղնում յատկապէս Աստուածաշնչից և պարսիկներից:

Բայց այս ամենը՝ առասպել, հեքաթ այլազգի զրոյցներ, մտնելով վէպի մէջ, որի սաղմն ու միջուկը բնիկ ազգային է, նրա հետ մի բովից անցնելով ի մի են ձուլւում և հետզհետէ ազգայնանում են, ստանալով ժողովրդի պատմական կեանքի պատկերը և դառնալով նրա մտքի և հոգու արտայայտութիւնը:

Այսպէս պէտք է տարբերել հեքաթ և ժողովրդական վէպ. և հէնց այս մեծ տարբերութիւնն է պատճառ, որ մինչ հեքաթի գնահատութիւնը չնչին է՝ դրականութեան մէջ, ժողովրդական վէպն ընդհակառակն շատ մեծ արժէք ունի: Դա ազգի դարաւոր կեանքի պատկերն է, նրա ձգտումների ու իդէալների մարմնացումն է: Մի խօսքով՝ վէպն ինքը ժողովուրդն է:

Տեսնենք մեր վէպի մի քանի էական կողմերը. որոշենք, որքան որ կարելի է, պատմութեան օգնութեամբ թէ ինչպէս է ծագել մեր վէպը, այսինքն թէ մեր մեծ պատմական դիպուածներից ազդուել է մեր ժողովրդի երևակայութիւնը. թէ ինչպէս յետագայ դարերում ուրիշ դէպքերից նոր տարրեր են մտել մէջը՝ կերպարանափոխ անելով հին վէպը. թէ ինչ առասպելական ու դիւցազնական գծեր ու զրոյցներ են ընդունուել վէպի մէջ, և թէ վերջապէս մեր ազգային կեանքը իւր մի քանի կողմերով որչափ երևում է նրա մէջ: Մի քանի կողմերով ենք ասում, որովհետեւ ամեն ընթերցող էլ պարզ տեսնում է, որ մեր վէպի մէջ ընդարձակ կերպով ցոլանում է մեր ռամիկ կեանքը. թէ տանը և թէ դուրսը. ուստի և կարելի չենք համարում այս նկատմամբ մանրամասնութիւնների մէջ մտնել: Բայց ամենից առաջ տեսնենք՝ ինչ աշխարհագրական տեղերի հետ է կապուած վէպի գործողութիւնը:

Գ

ՍՍՏՈՒՆՆ ԸՍՏ ՎԷՊԻ

Մենք տեսանք՝ վէպը մնում է յետ ընկած մարդոց մէջ Հայաստանի խուլ անկիւններում, ուր պատմողները շատ մութը ծանօթութիւն ունեն իրենց բնական տեղից դուրս գաւառների ու երկիրների մասին: Ուստի և վէպի մէջ աշխարհագրական անունները հեշտութեամբ շփոթւում են, կամ մոռացւում, տեղը նորերն անցնում, որոնք աւելի ծանօթ են, այս կամ այն ասացողին, կամ թէ գործողութեան տեղերը մօտեցնում պատմողի բնակութեան վայրին: Երբեմն նոյն իսկ մոռացւում են տեղի անունները և վէպըն ստանում է հեքաթային բնաւորութիւն: Այս ամենի հետեանքը լինում է այն, որ բոլոր պատմութեանների մէջ աշխարհագրու-

թիւնը միատեսակ նոյնը չէ: Բայց չը նայելով այս ամենին՝ վէպի մէջ տեսնում ենք իսկապէս մեր երկիրը՝ ինչպէս որ կայ, և ոչ թէ մի հեքաթային ֆանտաստիկական աշխարհ: Մենք կը վերցնենք ընդհանրապէս, նախ Սասնոյ իշխանութիւնը, ապա միւս երկիրները:

Սասունը վէպի հերոսների հայրենիքն է: Դա Սասնասարի և Բաղդասարի մօր, ուստի և նրանց հայրական երկիրն է, (9-րդ 406.) Դաւթի «խէրանց խէրանան» կամ «խէրանական երկիրը»: Այստեղ ծնւում, իշխում ու գործում են գրեթէ բոլոր գլխաւոր հերոսները, և վէպն իսկապէս Սասնոյ տէրերի պատմութիւնն է:

Դժբախտաբար Սասնու պատմութեամբ չունենք, որի մէջ տեղագրութիւնն աւելի ճիշտ կը լինէր: Քանի որ Սասնու բնութիւնը, լինն ու գետը, գիւղն ու վանքը աւելի ծանօթ են ամեն մի Սասնացու քան թէ մի մշեցու և մոկացու, էլ չենք ասում մակունցու, այրարատցու կամ արարանցու: Բայց և այնպէս՝ Սասունը լինելով վէպի կենդրոն, նրա տեղագրութեան մասին աւելի մանրամասն, աւելի ճիշտ և անշփոթ տեղեկութիւններ կան ընդհանրապէս բոլոր պատմութեամբների մէջ, քան թէ միւս տեղերի համար, որոնց մասին հարկանցի է անցնում վէպը:

Վէպի մէջ Սասունը սովորաբար յիշուած է իբրև բերդ և քաղաք, գաւառը քիչ անգամ է երևան գալիս՝ կոչուելով Սասմայ թագաւորութիւն կամ Սասմայ տեղ, աւելի ճիշտ դելս այսինքն դէս, կողմ: Դա մի լեռնային բարձր երկիր է, սար ու ձորերով, կապաններով հարուստ. կան և անտառներ (8-րդ 31. 9-րդ 407)¹⁾ բայց ընդհանրապէս արօտներով ծածկուած սարաւանդներ են և աւելի՝ քարքարոտ ու ամուր տեղեր, ուր գժուարութեամբ ներս մտնել կարող է թշնամին:

«Ես գիտցայ թէ Սասուն դաշտ ու դուրան էր,

Զգիտցայ թէ քար ու կապան էր»:

Մենք կարող չենք մտնել Սասուն.

Սասուն քար ու կապան է, ասում է պարտուած ու սարսափահար թշնամին (1-ն 161. 3-րդ, 103. 6-րդ, 23. 8-րդ, 30, 32, 9-րդ 379).

Այս լեռնային բարձրութիւններից վէպի մէջ յատկապէս յիշուած է Սեւ Սառ (1-ն, 144, 166. 3-րդ 65, 96, 99) որ ըստ Սըր-

¹⁾ Նկատենք, որ վկայութիւնների համար նշանակած երեսները լրիւ չեն առնուած ընդհանրապէս. անտառների համար, օրինակ, կարող էինք և ուրիշ երեսներ ցոյց տալ պատմութեամբների մէջ. բայց մենք շատ թուանշաններ կուտակելուց խոյս տալով սովորաբար նշանակում ենք մի քանի վկայութիւններ միայն:

աւանձտեանի (Գրոց ու Բրոց եր. 99), Սիւ սարն է, ապն է Տօ-
րսսք, որ Մօռ Սար ալ կըսուի. զոնազան գլուխներու բաժանու-
ած, քայց իբրեւ մէկ տան մէջ մէկ գերդաստանի անդամք՝ իրա-
րու մօտ ծունկ ծնկի, դէմ դէմի պուպուզած, ձորերով, վտակնե-
րով, գեղերով լի։ Եւ այդ գլուխների մէջ թւում է Սրուանձ-
տեանը Անթովք, Մարութայ կամ Մարութու լեռ, Սասունը կամ
Սասնոյ լեռ, Մովսսար և ապա Խոյթ, շոր թէպէտ անոնց մէկ
կտորն է, բայց խորթ։ Սե սար կոչումն ուրեմն ամբողջ լեռնա-
հանգոյցի անունն է։ Վէպի մէջ ևս Սե սար մի սար չէ, այլ մի
քանի սարերու Բայց Սե սարը և մի առանձին սար է դուրս գա-
լիս վէպի մէջ, և իսկապէս այդպէս կոչւում է Սասնոյ բարձրա-
ւանդակի հիւսիսային կողմը գտնուած լեռը, լերկ ու մշուշապատ
կատարներով (Արձագանք, 1894 № № 144. 147)։

Սասնոյ լեռների մէջ է ըստ վէպի և Մովսսար, շոր Առա-
քելոց վանքին մօտ է, և պատիկ ծով մը ունենալով իւր գագաթը՝
այս անունով կոչուած է։ Այս ծովակին շուրջ բուսած մանիշակնե-
րը երկնագոյն մարգեր կը ցուցանեն. և անթիւ են տեսակ ու գոյն
զանազան ծաղկանց, որ կը զմայլեցնեն արարածները իրենց տես-
քով ու գոյնով։ Իսկ խաւարծիւն աննման և յոյժ պատուական է
այս սարին։ (Գրոց ու Բրոց եր. 100 տես և Արձագանք 1894.
№ 147)։ Այս դալարագեղ ու ծաղկաւէտ սարը առանձնապէս յիշ-
ւում է իբրեւ վէպի հերոսների ժէհր անելու տեղ, ժէյրահատեղ, շ
կամ որսի սար (3-րդ, 24, 32 7-րդ, 10, 11, 19. 49—51, 58, 68.
8-րդ. 262 տ.)։ Բայց դա միայն արօտներ ու ծաղիկներ չէ որ
ունի, ինչպէս նկարագրում են այժմ և կամ դուրս է գալիս մի
քանի պատմութեան մէջ. այլ ծածկուած է և անտառներով, որ
անշուշտ հին անտառների յիշողութիւն է վէպի մէջ։

Մհերի և Դաւթի ու Ջէնով Յովանի պրօսպայր ու որսորդու-
թեան տեղ դուրս է գալիս և Աւագ սար, որի տեղը մեզ ծանօթ
չէ (9-րդ. 369. 375 հտն. 385 հտն. 396)։

Սե սարի մէջ է Մարութայ կամ Մարաթու լեռան կամ Մարա-
թուկ, որ Սասնոյ Խարզանք գաւառում է։ Այս լեռը, որ Սրուանձ-
տեանը անուանում է շուրբ և բարեպաշտ, Սասնոյ բոլոր ժո-
ղովրդի համար շառափն և վերջին ամենահաւատի և ծանր
երդմարան կարող է համարուել. շէնը Մարաթուի վկայ. շէնը
սուրբ Մարաթուի գինայ։ Մարաթուին ըստ վէպի շատ հետու չէ
Մովսսարից (7-րդ. 16 հտն.), և սովորաբար կոչւում է Քանձրիկ
Մարաթուի կամ սուրբ Բանձրիկ Մարաթուի (1-ն, 159. 3-րդ, 32
հտն)։ Լեռան վրայ կայ շինած շէնը Մարութայ բանձր Աստու-
որածին կամ Աստուածածին։ Կոչւած վանքը (6-րդ, 18. 3-րդ

98): Այստեղ գալիս է Քեռի Թորոսիկն աղօթելու, որ թշնամիներէն ազատ մնան, կամ յաղթութիւն շնորհէ Աստուած: Այստեղ կայ մի սուրբ նշան, որ Քեռի Թորոսիկը բերում է Դաւթին, որ նրան ոյժ տայ (3-րդ 32. 34 հտն.) կամ ինքը Դաւիթը կուր գնալուց առաջ գալիս է այս վանքում ուխտ ու մատաղ անում (1-ն, 159 7-րդ, 21. 34.): Սասնու վրայ յարձակուող թշնամիների նպատակակէտն է գլխաւորապէս Մարաթուկը: Նրանք աշխատում են աւերել վանքը, և Դաւթի հօր մահից յետոյ հէնց աւերում են. բայց Դաւիթը նորոգում է «խանգրած» վանքը և բազմաթիւ միաբանութիւն հաստատում միջին: Այս վանքն այնքան յարգանք ունի, որ նոյն իսկ Կողբադինը, որ նոյն վանքը քանդել էր երբ Դաւիթ հասնում բռնում է իրեն, ասում է. «Ես քու ժամու բախտ, ինձի չսպանես» և Դաւիթը չի սպանում նրան (3-րդ, 102):

Մարութայ Ս. Աստուածածին վանքը մի քանի պատմութեաներով դրւում է Սասմայ սարի մէջ կամ Սասմայ սարի գլուխ, (3 րդ. 100. 6-րդ. 18), որից երևում է, որ Սասմայ սար ասելով ընդհանրապէս Սև սարն է հասկացւում, որի մէջ է և Մարաթուկ: Բայց ըստ Սրուանձտեանի Սև սարի մէջ կայ և մի առանձին լեռ «Սասունք կամ Սասնոյ լեռան, որ եղբարց մէջ ամենէն զօրեղն է և անպարտելին՝ երկաթէ կողերով և քարոտ գլխով, և որ ասանջակտն եղած է Ասորոց Սենեքերիմ արքայի որդւոյ՝ Աղրամիկիքին և Սանասարին»: Սասմայ սարն իրբն առանձին լեռ դուրս է գալիս վէպի մէջ, մօտիկ Սասնոյ քաղաքին, որ շինում են Սանասարն և իւր եղբայրը: Այստեղ այս լեռան ետևն է հանում Դաւիթը Սասնոյ քաղաքի նախիրը:

Այնուհետև վէպի մէջ Սասունում յիշւում է Լեռայ սար, Լօռայ դաւոս, Լուրայ դաշտ, Լիւռայ դաշտ, Ռօլա դաշտ ու գետտուկ, որի տեղադրութիւնը մեզ յայտնի չէ: Լեռայ սարի գլուխն է բարձրանում Դաւիթն ու տեսնում Մարամեքի զօրքը բանակած ներքեւում Լօռայ դաշտի մէջ, ուր և երկուսը կուտւում են (3-րդ, 104, 110 հտն. 6-րդ, 23 հտն. 7-րդ. 19 հտն.): Այս դաշտի վրայով է Կողբադինը Մարից Մարաթուկի վրայ գալիս և այստեղ Դաւիթը վրայ է հասնում կոտորում Կողբադնի զօրքերը, երբ սա Մարաթուկն աւերելուց յետոյ աւարը Մարը է տանում (3-րդ. 104. 9-րդ, 378): Ուրիշ պատմութեամբով (7-րդ, 16) այս կոտորածը լինում է Սեւեղա կապանում, որ ըստ վէպի «ձորի մէջ է, տեղ չկայ որ փախնեն»: Տեղը դարձեալ մեզ յայտնի չէ: Լօռայ դաշտում է և Մհերը կոտորում Կողբադնի թոռներին, որ նեղութիւն են պատճառում Սասունին: Այստեղ այս դաշտում է Մարմեկիքը իւր «Քեռիներին» հետ հոլ խաղում և մանուկ Դաւիթը բռնում է նրա

հողը (9-րդ, 371 հտ.)։ Ուրիշ պատմութեամբով (8-րդ, 31, 35) Դաւիթը Կողբանդնի զօրքերը կոտորում է Բաքմանայ գետի վրայ, և Մարամեկքը զօրքով Դաւիթի վրայ է գալիս բանակ դնում Լուրայ դաշտում, Բաթմանայ ջրի վրէն։ Վէպի նկարագրից պարզ երևում է, որ այս լեռն ու դաշտը Սասնու և Մարայ մէջ է դրւում և յատկապէս Բաթմանայ գետի վրայ։ Դա Սասնոյ հարաւային սահմանում է, ըստ վէպի՝ բաւական հեռու Սասնոյ քաղաքից։ Բայց այդ լեռն ու դաշտը երբեմն և մօտ է դրւում Սասուն քաղաքին. այս դաշտում է մի պատմութեամբով (7-րդ. 8 հտ.) Դաւիթըն ուլիւր արածացնում։

Բաքմանայ գետ և յատկապէս Բաքմանայ կամուրջ յաճախ յիշւում է վէպի մէջ։ Այս կամուրջը սահման է Մարայ և Սասնու (4-րդ, 434. 6-րդ. 7 հտ, 8-րդ. 23, 31)։ Դաւիթին Մարից Սասուն բերող փահլանները Բաթմանայ կամուրջի վրայ կանգնած ասում են. «Զուր մկայ մենք մեր երկիր ենք. մկայ էկիր ենք ձեր երկիր»։ Ուրիշ պատմութեամբով (9-րդ, 373) թէպէտ անուն չի յիշւում, բայց Մարամեկքի և Դաւիթի հօր երկիրների բախօրը դրւում է դարձեալ մի կամուրջ։ Բաթմանայ գետը, յայտնի է, Սասնոյ գետն է, որ Տիգրիսի մէջ է թափւում։ Այս գետի վրայ կայ մի պատմական «հրաշակերտ» կամուրջ, «Քառասուն հոյակապ քար ու կիր սենեակներով։ Սա դիտողի մը յիշեցնել. կուտայ հին արաբական ղեղարուեստի ճարտարապետական ճաշակն... Պալիֆոյական աշխարհի զաւակներն այդ կամուրջին առասպելական զրոյցների, գեղի ու գովքի շարքեր են յատկացրեր։ Հայերի կողմէն ևս նոյն կամուրջի մասին առակի կարգն անցած կը պատմուի» թէ երբ Ս. Լուսաւորիչ Աշտիշատում մեհեանները կործանելով հալածական է անում գեներին, սրանցից մէկը՝ կաղ գեւը եամանի գալով հնազանդում է Լուսաւորչին և խնդրում ներել իրեն.

«Զիս մի հանի հախ—դիւան, Ես կամքովս կը զամ եաման, Կեղնեմ քեզի փոշեհան, Տանեմ թափեմ Փրէ Բաթման»։

Հաւատացւում է, որ իբր այժմ էլ այս գեւը աներևութաբար Ս. Կարապետի վանքի մոխիրը տանում թափւում է Փրէ Բաթման գետի մէջ (Արձագանք 1894, № 144)։ Փրէ Բաթման նշանակում է Բաթմանայ կամուրջ. Սրուանձտեանը նոյն անուն գիւղ է դրնում. «կաղ գեւը մոխիրը կը շալակէ գետնի տակով կը տանէ երկու աւուր ճանապարհ դէպի Տիգրանակերտ՝ Փրէ Բաթման գիւղի մօտ կը թափէ, որմէ բլուր մը ձևացեր է (Դրոց Բրոց, եր. 105. նոյն տեղում և երգը, որի վարիանտը տես Սեդրակեան քնար Մշեցոց և Վանեցոց)»

(Կը շարունակուի)